

Py Mycrophila
Yunnanensis 3-5


634
9-76

24 SEP 2010



Պոր

մերձարենվաղարշախին
հուլիսուրանենը^ը
հայաստանուս



634
Զ-76
յուղիրաք
երեւան
936 •

17 JUL 2013

Ա. ՅԱՓՈՒԶՅԱՆ, ԵԵ. ՆԱԶԱՐՅԱՆ,
ՀՊ. ԳԻԼՈՒՅԱՆ, Ա. ԶԱԲԱՐՅԱՆ

634 up.
9-76

ՀՈՐՄԵՐԱՎԵՎԱԴՐԱՎԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(ՀԱՅԵՑ ՊԵՏԱԿԱՆ ԶԱՐՈՒԹՅԱԿԱՆ ԶՈՒՄԸ
ԿԱՅԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՑ)

- ԸՆԿՐԱՑԵ Ի
 - ՆՏԵԱԴ
 - ԸՆՏԱՐԻ ԿԱՐԵՒԻ
 - ԲԶԵՒԻ
 - ՆՈՆԵՆԻ
 - ՊԻՄԱԿԱԿԵՆԻ
 - ՀԱՊՈՆԱԿԱՆ ԱՐՄԱԿԵՆԻ



Ն Ա Խ Ա Բ Ա Ն

ՀՍԽՀ կուս-խորհրդային ղեկավար որդանների վորոշումների կենսադործման կապակցությամբ, Հայաստանի համապատասխան շրջաններում չոր մերձարևադարձային բույսերի մշակության գործին զարկ տալու համար, վորպես նախնական միջոցառումներից մեկը, Հանրապետական Պաղա-բանջարաբուծական Զոնալ կայանն իր գիտական աշխատակիցների ուժերով կազմեց սույն աշխատությունը, լուսաբանելով վերը նշված հիմնական կուտուրանների կենսաբանական ու ազրոտեխնիկական տուածնահերթ գիտելիքները:

Այս կուլտուրանների մեծ մասը Հայաստանի պայմաններում նոր լինելու և տեղական ուսումնասիրության փորձի բացակայության պատճառով, աշխատությունը կազմող գիտ-աշխատաները ոգտագործել են գլխավորապես այս կուլտուրաների վերաբերյալ գրականության մեջ լեզած նյութերը և ԽՍՀՄ-ի ու արտասահմանի գիտա-հետազոտական կայաննեղի փորձերի տվյալները:

Նշված նյութերի և մինչ այժմ կայանի կողմից տարված սեփական հետազոտության տվյալների կոմպլեքսն ոգտագործելիս հաշվի լին առնվել Հայաստանի տարբեր շրջանների

ուրույն պայմանները, վորոնք սակախ գեռեա հարկ յեղածին
շափով ուսումնասիրված չեն:

Կարճ ժամանակամիջոցում կազմված այս աշխատությունը
կապահովի նշված կուլտուրաների զարգացման ու բազմացման
գործն սկսելու հնարավորությունները, վորից հետո, տեղական
փորձի և ասորտիմենտի ուսումնասիրության ավանդների աս-
տիճանական կուտակման հետ միասին, կարելի կիսի ավելի
մանրամասն աշխատությունն հրատարակել:

Աշխատությունը կազմելուն մասնակցել են գիտ-աշխա-
տողներ՝ ընկ. ընկ. Ա. Յափուջյանը, Յե. Նազարյանը, Ա. Զա-
բարյանը յեւ Հր. Դիլանյանը:

Ն Ե Ր Ա Մ Ա Կ Ա Ն

Հայաստանի արդյունաբերական պտղաբուծության շրջան-
ների թվում մի քանի միկրոշաններ ունեն չոր ցամաքալին
մերձարևադարձային գոտուն հատուկ կլիմայական պայման-
ներ։ Սրանց թվին են պատկանում՝ Ալլահվերդու, Մեղրու,
Իջևանի, Միկուանի, Գորիսի շրջանները, վորոնք բնական-աշ-
խարհագրական և կլիմայական բազմապիսի պայմաններ ունեն
ու ծովի մակերեսույթից 750—1500 և ավելի. մետր բարձրու-
թյան վրա ին գտնվում։ Սակայն չոր մերձարևադար-
ձալին կուլտուրաների զարգացման գոտին այս շրջաններում
բավական սահմանափակ է և դիմավորապես տարածված է հար-
թավայրերում, գետերի հովիտներում և լեռների ցածրադիր
լանջերում։

Այս շրջաններում արեգակի անսպառ եներգիան, բերքի հո-
ղերը մերձարևադարձային թանգարժեք կուլտուրաների՝ թզե-
նու, նոնենու, ճապոնական արմավենու աճման ու զարգացման
համար ստեղծում են բոլոր նախադրյաները։

Ինչ վերաբերում ե ընկուզապտուղ բուլսերին (ընկուզենի,
նշենի, կազնի, պիստակենի) սրանց տարածման գոտին ավելի

յել լայնանում, ընդգրկելով՝ բացի վերը նշան շրջաններից՝ նաև կոտայքի, Աշտարակի, Շամշադինի և կենտրոնական հարթակայրի մի շարք այլ Մշանները:

Համաձայն ՀԿ(Բ)Կ կենտրոնի և ՀՍԽՀ Հողժողկոմատէ վորոշումների, մերձարևադարձային թանգարժեք կուլտուրաների աճեցման համար Հայաստանի հարուստ հնարավորությունները լայն չափով պիտի ոգտագործել այն հաշվով, վարկարելի լինի լիովին բավարարել վոչ միայն Հայաստանի աշխատավորության սպառման պահանջները, այլև ստեղծել արահանման, վերամշակման արդյունաբերական հիմնական բառական հատկապես ընկուզապտուղների վերաբերմամբ:

Այս նոր խիստ կարևոր խնդրի լուծումն առաջին հերթին սպահանջում և մերձարևադարձային շրջանների մանրազնին ուսումնասիրություն՝ միկրոշրջանների սահմաններում, վորովիսի պարտավորությունն առաջին հերթին դրվում և գիտական աշխատավորների կողեկտիվի՝ պտղաբուծների, հողագետների, ողերևութաբանների վրա, տեղերի ղեկավար աշխատակիցների, հատկապես ագրոպերսոնալի ամենասերտ մասնակցությամբ:

Այս պատասխանատու աշխատանքը հնարավոր և բոլոր Մշաններում կատարել, մասնակից դարձնելով կոմիրիտական տկտիվին, լավագույն կոլտնտեսականներին, փորձարարներին, վարժուց բացառիկ նախաձեռնության վրա հենվելով հնարավոր և լրիվ կերպով յերևան հանել տառանձին շրջանների պտղաբուծության խոշորագույն հնարավորությունները, համախմբելով դրանց աշխատանքը նոր կազմակերպվող խրճիթ-լաբորատորիաների շուրջը:

Ամբողջ Միության մեջ մերձարևադարձային կուլտուրաների արդյունաբերական զարգացման դործը բավականին նոր և, ընդամենը մի քանի տարվա պատմություն ունի: Բայց և այնպես մերձարևադարձային պտղաբուծությունը հատկապես Անդրկովկասում մի շարք խոշորագույն նվաճումներ և ձեռքբերել արդեն, մասնավորապես ցիսրուտների, թելի և տեխնիկական մի շարք նոր կուլտուրաների մշակության բնագավա-

ռում, աստիճանաբար ազատելով յերկիրը մերձարևադարձային թանգարժեք հումույթի ներսուծումից:

Անդրկովկասի խոնավ մերձարևադարձային կուլտուրաների փորձը մեր պայմաններում հնարավոր չել լրիվ ոգտագործել անգամ թղենու, նոնհնու և ճաղոնական արմավենու վերաբերմամբ, քանի վոր այս կուլտուրաները Հայաստանի շոր մերձարևադարձային պայմաններում, առօրտիմենտի ընտրության և ագրոտեխնիկական խնամքի այլ միջացներ կպահանջնեն:

Հայաստանի պայմանները համեմատաբար ավելի մոտ են Անդրկովկասի արևելյան մասի մերձարևադարձային շրջանների (Ապշերոնյան, Քյուրդամիրի, Գյոկչայի, Աղդաշի) և Միջին Ասիայի պայմաններին:

Միջին Ասիայի մերձարևադարձային պտղաբուծությունն Անդրկովկասի համեմատությամբ, չնայած վոր ավելի յերիտասարդ և, բայց վորպես չոր մերձարևադարձային կուլտուրաների զարգացման փորձ, մեղ մոտ կարելի յե ամենալայն չտփերով սպառագործել: Բայց և այնպես, այն հիմնական միջոցառումները, վարոնք կարող են վորոշել կուլտուրաների հաջող դառավորությունն ըստ Հայաստանի առանձին շրջանների, զետք և ընդգրկեն և արտացոլեն:

1. Զոր մերձարևադարձային կուլտուրաների եֆեկտիվության տնտեսական հիմնավորումը նշված շրջաններում և սրանց դասավորումն ըստ միկրոշրջանների:

Այս խիստ թանգարժեք բուլսերը, վարոնք սահմանափակ չափով աճում են վերոհիշյալ շրջաններում, հնարավոր և բայց կերպով աարածել ինչպես խորհրդային և կողեկտիվ տնտեսություններում, նույնպես և կոլտնտեսականների անամերձ հողաբաժիններում (տես № 1 աղյուսակը):

Ամենաճիշտ պլանավորման պայմաններում և միայն, վարչական պատահովել այս նոր տեսակի պտղաբուծությունը հատկապես Անդրկովկասում մի շարք խոշորագույն նվաճումներ և ձեռքբերել արդեն, մասնավորապես ցիսրուտների, թելի և տեխնիկական մի շարք արդեն ի հաշվի դյուզատնտեսական ավելի պահան արդյունավետ կուլտուրաների:

Հաշվի ամսելով Մեղրու, Միկոյանի, Գորիսի միկրոշրջանների ցրվածությունը և հաղորդակցության ճանապարհներով անտագործվ լինելը (յերկաթղծի բացակալություն)՝ անհրաժեշտ ե մանրազնին հիմնափորել հատկապես չոր մերձարեադրձարին կուլտուրանների տնկարանների կազմակերպման գործը, պահպանելով յուրաքանչյուր շրջանի համար մեկ համապատասխան տնկարան, համարելով այն այս շրջանների պատղաբուծության զարգացման ամերանհրաժեշտ պայմանը:

2. Կուլտուրանների հաջող գասավորության հիմնական միջցառումները պետք ե ընդգրկեն և արտացոլեն նշված շրջանների ողերնութարանական պայմանների մանրազնին ընութագիրը, պարզաբանելով հատկապես շերմաստիճանի ձմեռային տատանումների ոեժիմը, քանի վոր ձմեռվա ընթացքում շերմաստիճանի իջեցումն ե, վոր սահմանափակում և այս կուլտուրանների լայն զարգացումը։ Այս շրջաններում, ճիշտ ե, ցրտահարություններ լինում են, բայց և այնպես քամուց պաշտպանված մասերում շերմաստիճանը՝ Մեղրու շրջանում $10-12^{\circ}$ (δ), իսկ Ալլահվերդու, Իջևանի, Գորիսի և Միկոյանի շրջաններում $19-20^{\circ}$ -ից ավելի չեն իջնում (տես № 2 պայմանակը):

Այս բոլոր շրջանների ակտիվ շերմաստիճանի տարեկան գումարը, հատկապես վեգետացիոն շրջանում, բավական մեծ ե, 3000° -ից ավելի, վորի շնորհիվ և ապահովվում է նշված կուլտուրանների թե նորմալ աճը և թե պատղաբերությունը (տես № 3 աղյուսակը):

Հայաստանի չոր մերձարեադարձալին բոլոր շրջանները յերկարատև աշուն ունեն, վորը նույնպես այս կուլտուրանների աճեցման և զարգացման համար ավելի քան բարենպաստ պայման եւ:

Սրա հետ միասին, ովի յերբեմնի ծայր աստիճան չորությունը և աճառվա ընթացքում մթնոլորտային տեղումների համարև լրիվ բացակալությունը այս բուլսերը զարձնում են ավելի ցրտադիմացկուն, քան Անդրկովկասի խոնավ մերձարեադրձալին պայմաններում աճող նույն կուլտուրան (տես № 4 պայմանակը):

3. Շատ կարևոր են նաև վերը նշված շրջանների հողային-յերկրաբանական պայմանները։ Այս շրջանները մեծ մասամբ ունեն բավական հարուստ, բերբի հողեր, վորոնց մասին վկայում են հողային հետազոտություններն ու բացառիկ փարթամբուսականնությունը, այս թվում նաև բազմաթիվ պտղատուծաբերը, վորոնք ամենու ընթացք տարածված են ինչպես վայրի, նույնպես և կուլտուրական տնկվածքի վիճակում։

Ինչ վերաբերում է չոր մերձարեադարձային կուլտուրաններին և ընկուզապտուղներին, սրանք հաջող կերպով մշակվում են պտղատու տեսակներին պիտանի համարյա բոլոր հողերում։ Ավելի քան բարդ են այս շրջանների աշխարհագրականներկանական պայմանները, քանի վոր այս վայրերը՝ խիստ լեռնոտ լինելու հետևանքով՝ շատ կարտված են և շատ թե քիչ հարթ տարածություններ համարյա թե չունեն։ Սրա հետևանքով ե, վոր Մեղրու, Ալլահվերդու, Միկոյանի և նույնիսկ Գորիսի շրջանների լանջերն ու անգամ քաքարու ծերպերն զրադեցված են զյուղատնտեսական կուլտուրաններով, վորոնց թվում և պտղատու ծառերով։

Մերձարեադարձային կուլտուրանների արգլունաբերական մշակությունն սկսելիս անհրաժեշտ է այս բոլոր շրջաններում առաջին հերթին մանրազնին կերպով առանձնացնել միկրոշրջանները, ապա և անկվածքների համար անհրաժեշտ տարածություններ։ Այս գործին կոժանդակեն այս շրջանների ներկաուումներության և մինչ այժմ կատարած հողային բազմաթիվ հետազոտությունները, վորոնց մինչ ոգտագործելը պետք է վերացնակել միկրոշրջանների սահմաններում։

4. Տեսակների և սորտերի կազմի վորոշումն ու այս կուլտուրանների տղրոմիջոցառումները չոր մերձարեավաղարձային կուլտուրանների տարածման ամսահիմնական ողակներից մեկն հանդիսանում։

Այս աշխատանքը պետք է տարվի լերկու ուղղությամբ։

ա. Մերձարեադարձային տեղական պտղատու բույսերի առկա ֆոնդի հաշվառման և ոգտագործման ուղղությամբ։

բ. Անդրկովկասի արևելյան մասից, Միջին Ասիաից և

արտասահմանի համապատասխան յերկրներից (Պարսկաստանից, Բաւրջիալից) բերված մերձարևադարձային պտղատու տեսակների ներմուծման ու սորտերի փորձարկման ուղղությամբ:

Մինչեւ այսոր մերձարևադարձային անվիճելի կուլտուրաներ պետք է համարել, առաջին հերթին՝ ընկուղենին, կաղնին, նշենին, գոտենին, թզենին, նոնենին և ճապոնական արմավենին:

Այստեղ առաջին հերթին պետք է անջատել ավելի քան մեծ չափերով տարածված կուլտուրաները՝ ընկուղենին, նոնենին, նշենին, թզենին: Ինչ վերաբերում է տիլենուն, սա առայժմ համարյա միայն վայրի դրությամբ և տարածված Հայաստանի անտառներում: Ճապոնական արմավենին և վատենին բոլորովին նոր կուլտուրաներ են և Հայաստանի շրջաններում գործություն չունեն: Սակայն յենելով այս կուլտուրաների բացասիկ թանգարժեք լինելուց և շոր մերձարևադարձային շրջանների ու Հայաստանի համապատասխան շրջանների հողային կլիմայական անալոգիալից, կասկածից գոյւրս ե, վոր այս յերկու կուլտուրաներն ես Հայաստանում զարգացման լայն հնարավություններ ունեն և պետք է զարգացվեն:

Մերձարևադարձային կուլտուրաները Հայաստանի համապատասխան միկրշրջաններում կարող են մշակվել բաց դաշտում, առանց ձմռանը թաղելու, վորն և ապացուցվուն և այս շրջանների հարուստ փորձով: Սակայն որանց բարձր բերքատվությունը հնարավոր է միայն նորագույն բարձր ազրոտեխնիկալի ամենաճիշտ կիրառման դեպքում:

Ներկայումս Հայաստանի շրջաններում այս կուլտուրաներից ընկուղապտուղներն առաջնակարգ տեղ են բոնում և անտեսական ավելի բարձր եֆեկտիվություն ունեն: Ընկուղապտուղների նշանակությունն ավելի բարձրանում է նրանով, վոր սրանց արդյունաբերական մշակության սահմանը վերոհիշյալ շրջաններից ավելի հեռու յէ տարածվում և այնպիսի թանգարժեք կուլտուրաները, ինչպիսիքն են՝ ընկուղենին, նշենին, պետք ե, բացի նշված շրջաններից: Լայն չափերով տարածել նաև կոտաքի, Աշտարակի շրջաններում, վորտեղ սրանցից կարելի լին սպառել մեծ քանակով և թանգարժեք մթերքներ:

Հայաստանում մշակվելիք նոր մերձարևադարձային կուլտուրաների մեջ բացառիկ նշանակություն ունի փստենու թանգարժեք կուլտուրան թեկուղ հենց նրա համար, վոր այս կուլտուրան բավական ցրտադիմացկուն ե (դիմանում է 25—30⁰ (Ց) սառնամանիքներին), չորադիմացկուն ե (առանց ջրելու դիմանում և ատրվա ընթացքում 250—300 մմ մըթնողորտային տեղումներ ունեցող շրջաններում) և, վոր ամենակարևոր ե, կարելի լին մշակել մերձարևադարձային և դաշտավին շրջանների չար, անջրդի լանջերում:

Տեսակների և սորտերի կազմը հայտաբերելու, հիմնավորելու և ազրութեանիկայի մշակման աշխատանքները հանձնարարված են: Հանրապետական Պաղարանշարաբուծական Զոհարկայանին:

Մերձարևադարձային կուլտուրաների գարգացման գործի այսորվա նեղ տեղերից մեկն, այս մշակության կենսաբանական ու ազրութեանիկայն դիտելիքներին տիրապետող կագրերի անբավարար քանակն ե, մասնավորապես շրջաններում:

Գյուղատնտեսների, ազրութեանիկների, բրիգադիրների, այգեպանների, վորակյալ բանվորների, աշխատանքի տեխնիկային տիրապետող և սոցիալիստական պտղաբուծության զարգացմանը նվիրված կազմերի պատրաստման խնդիրը այս նոր գործի հաջողության դրավականներից մեկն և հանդիսանում:

Վերը նշված միջոցառումները լիովին կապահովեն մերձարևադարձային կուլտուրաների բարձր բերքատվությունը, քանի վոր ամենը բղխում և մեր կուսակցության վորոշումներից, քանի վոր ընկեր Սատինն անձամբ ուշադրություն և դաշտնում մերձարևադարձային կուլտուրաների զարգացման գործին:

Տար մերձարևի աղաքարականին կուլտուրաների բանակն ըստ շրջանների
(Ըստ ԺՏՀՎ-ի 1932 թ. տվյալների)

Շրջաններ	Բարձրաւ- թյանը ծովի մա- կերևուր- թից	Թղթենի		Նոնենի		Ընկազմի		Կաղմի	
		հատե- բազ	%	հատե- բազ	%	հատե- բազ	%	հատե- բազ	%
		բազ	%	բազ	%	բազ	%	բազ	%
1 Մեղքի	6910	5.898	5.9	20,209	20,3	5652	5.7	87	0.09
2 Գորիս	13750	794	0.7	537	0.5	8086	7.6	506	0.4
3 Ղափան	—	—	—	—	—	3064	7.6	120	0.3
4 Միկոյան	13400	248	0.3	—	—	4592	5.5	—	—
5 Փաշալու	—	—	—	—	—	1224	7.1	—	—
6 Աշուաբակ	11500	—	—	60	0.07	7821	9.9	—	—
7 Շամշադին	—	180	0.6	274	0.9	652	2.1	157	0.5
8 Ալանիկերդ	—	690	1.0	202	0.3	1620	2.3	157	0.2
9 Իջևան	7250	407	6.1	386	0.6	1723	2.6	568	0.9
10 Կառայք	—	—	—	55	0.08	9821	15.6	69	0.1

Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների 0° բարձր սերի յել նշանց
ջերմության բանակը

Շրջաններ	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների													
	0°-ից բարձր ջերմության պահանջմանը	0°-ից բարձր ջերմության պահանջմանը												
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Յունիս	Հունիս	Հուլիս	Աշուաբակ				
1 Իջևան	3546,1	279	0,3	0,1	4,9	9,2	13,7	17,5	20,7	21,2	16,2	11,5	5,9	2,6
2 Մեղքի	4943,9	261	0,7	5,3	7,2	13,5	19,1	23,2	26,8	26,1	21,5	16,2	9,4	1,2
3 Միկոյան	4122,6	223	—7,1	—4,6	2,4	9,6	15,6	21,9	25,2	25,2	20,8	14,2	8,3	0,4
4 Գորիս	3000,6	263	—2,0	—0,1	2,7	8,4	12,1	15,4	17,8	18,0	14,2	9,4	5,1	1,2
5 Աշուա- բակ	4169,1	249	—5,1	—3,3	3,1	10,5	16,0	20,7	24,6	24,6	20,3	14,2	6,0	—1,1
6 Կոտայք (2առ)	3664,2	247	—5,8	—5,6	0,7	9,5	14,4	18,5	21,1	22,7	17,5	12,0	5,8	—4,7

Աղյուսակ № 2

Աղի ջերմության մինիմումն ըստ ամիսների

Շրջաններ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
	1	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Իջևան	18,5	-13,1	-4,4	0,4	5,4	10,4	—	4,8	-0,5	-8,6	-11,3	
Գորիս	-16,5	-17,9	-14,6	-6,5	1,0	2,9	8,2	7,0	3,8	-3,8	12,1	-18,1
Մեղքի	-15,5	-14,1	-9,6	-1,4	7,2	8,9	14,1	11,4	5,7	—	-5,4	-13,9
2 առ (4- առայք)	-20,3	-19,7	-14,2	-5,8	0,2	4,4	8,0	9,7	4,9	1,5	-15,0	-17,1
Միկոյան	-10,0	-11,9	-10,5	-1,5	3,4	7,0	12,0	12,5	6,3	6,6	-8,3	-13,9
Աշուաբակ	—	-15,9	-11,4	+3,3	4,9	9,8	12,2	14,4	7,4	5,4	-2,1	-7,7

Տարվա սեղումների բանակը յել բաշխումն ըստ ամիսների

Շրջաններ	Տարվամերներն ըստ ամիսների (միլիմետրներով)												
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
1 Իջևան	9	25	33	75	91	100	55	30	40	28	28	20	537
2 Շամշադին	16	43	37	55	88	96	82	36	43	30	42	32	572
3 Աւագագերդ	—	23,6	19	66,1	73,1	40,7	72,3	93,9	54,6	15,1	33,2	65,9	557,5
4 Աշուաբակ	19	20	84	40	55	35	23	14	17	24	39	31	351
5 Գորիս	36	68	60	98	111	75	39	30	66	50	66	14	743
6 Մեղքի	24	21	25	28	36	16	6	9	20	15	56	26	272
7 Միկոյան	23,4	33,3	27,6	78,2	49,6	30,8	20,8	13,4	10,9	21,6	34,3	47,4	391,9

Ները. հատ-հատ ծառեր կան նաև Ղրիմի հյուսիսային մասերում:


Թուսաստանի միջին յեվրոպական մասերում ընկուղենուն կարելի յե հանդիպել 52° հյուսիսային լանությունից բարձր վայրերում: Այս մասերից ավելի հյուսիս թեև ընկուղենուն հատուկենու ծառեր կան, բայց բերք չեն առլիս:

Ընկուղենին մեծ տարածություններով և մեծ քանակությամբ տարածված ե Միջին Ասիայի՝ հարավային Կիրգիզիան, Ֆերգանի (մատ 31288 հեկտար անտառներ) և Չաղկալան (6757 հեկտար անտառներ) շրջաններում և Հարավային Կազակուտանի՝ Պոկիմյան Ուզամլան շրջաններում: Տաջիկուտանի Գիսարյան շրջանում, ուր ընկուղենին այլ տեսակի ծառերի հետ միասին կազմում է 38,760 հեկտար, ծառերի 0,4 մասն և կազմում: Թուրքմենստանի Կապետղագյան շրջանում հատ ու կենա ձեռվ մատ 3000

ծառ կա:

Այսպիսով, Միջին Ասիան հանդիսանում ե ընկուղենու ամենատարածված շրջանը ԽՍՀՄ-ում, իսկ Միջին Ասիայի գոտում ընկուղենու ամենատարածված շրջանները հարավային Կիրգիզիան և Տաջիկուտանն են:

Ընկուղենին տարածված ե Անդրկովկասի յերեք հանրապետություններում Վրաստանում՝ Աբխազիայում, Գուրիայում, Մինդզիայում, Իմերեթիայում, Բաթումի շրջանում, Քուռի ներքին հավատում. Ադրբեյջանում



Նկար 1. Ընկուղի կտրվածք, 2. արտկան ծաղիկը, 3. իգական ծաղիկը

1.

Հ Ն Կ Ո Ւ Զ Ե Ն Ի

Ընկուղենին (*Juglans regia*) պատկանում ե ընկուղենիների ընտանիքին (*Juglandaceae*). Նրա հայրենիքը Պարսկաստանն է: Անման հյուսիսային սահմանը արևելյան Յեվրոպայում հասնում է 52° հյուսիսային լայնությանը, իսկ արևմտյան Յեվրոպայում՝ 63°-ի: Ընկուղենին աճում ե ծովի մակերեվույթից 2100—2700 մետր բարձրության վրա: Վարդի վիճակում աճում և հյուսիսային Պարսկաստանում, Բելուջիստանում, Հյուսիսային Հնդկաստանում, Հյուսիսային Չինաստանում և Ճապոնիայում: Ընկուղենին լայն չափերով զարգացվում ե Ֆրանսիայում, Իտալիայում, Իսպանիայում, քիչ չափերով՝ Անգլիայում, Գերմանիայում և Միացյալ Նահանգներում:

ԽՍՀՄ-ում ևս բավական տարածված են ինչպես վալի, նույնպես և կուլտուրական տեսակները:

Անդրկովկասում 1350 մ բարձրության վրա համարյա ամեն տեղ կարելի յե հանդիպել ընկուղենու հազվագյուտ տեղերում միայն ընկուղենու անտառներ կան: Մա մեծ մասամբ հատ-հատ ծառերով ե բուսած: Ղրիմի հարավային-լեռնային մասերում զարգացվում են ընկուղենու կուլտուրական տեսակ-

Արդուբաթի, Նուխու, Կուբայի և Զաքաթալայի շրջաններում՝ Հայաստանում—զվարավորապես Միկրյանի, Գորիսի, Ղտփանի, Աշտարակի, Մեղրու, Կոտայքի, Յերեվանի, Իջևանի ու Ալահավերդու շրջաններում:

Ընկուզնին բավական խոշոր մեծության ձառ Ե՝ 18—20
մետր բարձրությամբ և 20 մետր արամագիծ ունեցող սաղար-
թավ: Անի 5—7 զույգ հերթադիր, կենտ-փետրաձև, խոշոր, հո-
գավհատ, ձմռան ընթացքում թափփող տերևներ:

Ըսկուղենին միատուն բույս է և ունի միասեռ ծաղիկներ, վարոնք գտնվում են նույն ծառի վրա։ Արական ծաղիկներն իրենցից ներկայացնում են կախված կատվիկներ՝ 6-8 սմ յերկարությամբ, զորոնք գտնվում են նախորդ տարվա ճուղերի վրա։

Կատվիկները հաստ են, դլանաձև, մուղ-կանաչ գույնի
փոշին հասունանալուց սրանք վորխվում են կանաչ շագանակա-
դույնի. Արական ծաղիկը կազմված է յերկու ծաղկակալից,
չըրս մաս ունեցող բաժակից և տասից—քառասուն առեջքնե-
րից:

Արտկան ծաղիկների փոշին իգական ծաղիկների վրա
թափվելուց և վաղ գարնանը բեղմնափրձան պրոցեսը վերջա-
նալուց հետո կատարվելու թափվում են: Իգական ծաղիկները
մեկական են, կամ միքանիսը մեկ տեղ են նստած: Սրանք գտնը-
վում են լերիտասարդ ճյուղերի ծայրերին: Ծաղիկն ունի չորս
մաս ունեցող բաժակ, լերեք մաս ունեցող փաթաթան, յերկու
մաս ունեցող վարսանդ վաշ մաքուր սպիտակ գույնով: Ծաղիկ-
ները փոքր են, ընկուղենու ծաղկումն սկսվում է ապրիլի
վերջերից և տեղում ե մինչև մայիսի կեսերը: Պտուղը խոշոր
ընկույցն է (ԿՈՍՏՅԱՆԿԱ): Ընկուղենու ճյուղերը և բունը պատաժ
են մոխրագույն կեղևով. վերջինս յերիտասարդ ճյուղերի
վրա հարթ է, իսկ հների վրա՝ ճաքճքված: Պտուղն ընկույցն է՝
արտաքուստ լրջապատված կանաչ, հաստ ու մասլի պտղագա-
տիճով. հաստնանալուց սա ճաքճքվում և ընկույցն ընկնում է:

Ընկույզի միջուկը աեղավորված է տարբեր ձևի և հաս-
տառթյան կեղեի մեջ։ Սրա ներքին մակերեսը ծածկված է գոր-
շապույն թաղանթով։

Տարբեր սորտերի ընկույզները տարբեր հասառոթան և ծալքերով կեղև ունեն: Միջուկն (սերմը) ամուր նստած և կեղուի մեջ: Սա հաստ փայտային միջնապատի միջոցավ բաժանվում և յերկու մասի: Միջուկն ևս իր հերթին շրջապատված ենուրը թաղանթով:

Հնկառվզի միջուկն իր մեջ պարունակում է 55—70%, ճարպ և 15% աղոտացին նյութեր. սա սննդատու մթերք և համարվում:

Հատ Կյուսերի 20 ընկալվը կարող է բավարարել մարդու ճարպի որական պահանջը և սպիտակուցային նյութերի 1/6 մասը:

Հնկույզի միջուկի քիմիական բաղադրությունն ըստ կե-
նիդի հետևյալ պատկերն եւ տակիս:

<i>Զուր</i>	<i>Ազգային</i>	<i>Հարավային</i>	<i>Անազգային</i>	<i>Թաղական</i>	<i>Եռ-</i>	
<i>Տիեզերական</i>	<i>Հիմնական</i>	<i>Հարավային</i>	<i>Եթուական</i>	<i>Բանական</i>	<i>Խեց</i>	
<i>Թարթ միջաւակ</i>	23,53	23,80	48,17	10,69	2,45	1,36
<i>Զոր</i> <i>միջաւակ</i>	7,18	16,74	58,47	12,29	2,95	1,65

Հստ Բոգոմոլովի՝ ընկույզի 60,8% ը կազմում է կեղեց, 39,2% ը միջուկը, վարն ունի 67,89% մարմ և 16,07% աղոստային նյութեր:

Ըսկուզենու ճարպը լավորակ տեսակի յուղ ե. շնորհիվ
նրա, վոր ար ճարպը շուտ չըրանում և յերկար դիմանում է,
ոգտագործվում ե տպագրական թանաք և լաքեր պատրաստե-
լու համար:

Ըսկույզն սգտագործվում է ինչպես հասուն, նույնպես և խակ վիճակում։ Հասուն վիճակում սգտագործվում է վորպես պատրաստի մննդանիութ, իսկ խակ ընկույզից պատրաստում են մուրաբաներ։

Ըսկույզի քուսպը դործագրվում և իբրև անանակեր: Կա-
նաչ տերեւները, կեղեղ և պտղապատիճն իբենց մեջ պարու-
նակելով մեծ քանակի զաբաղանցութ, ոգտագործվում են կաշ-
վի արտադրության մեջ և ներկ ստանալու համար:

Հնկույզի տերեներն առաջ ածվում են բժշկության մեջ,



իոկ ծաղիկները մեղաւների համար արդյունավետ կեր են հանդիսանաւմ:

Ընկուզենին ամռուր, դիմացկուն, հեշտությամբ մշակվող, չիտնալի կղկվող, փայտանյութ ունի: Նրա տեսակարար կշիռը թաց ժամանակ $0,91-0,92$, իսկ չոր զիճակում $0,65-0,71$ է: Առանձնապես հայտնի յե կովկասում աճող ընկուզենու բարձրութիւն, բնական, գեղեցիկ նախշերով լեղած փայտանյութը, փոքր իր վորակով առավել բարձր է, քան համաշխարհային հաջակ վայելող խտալական ընկուզենու բնափայտը: Բնափայտը չորացնելուց չի փշանում և տեսքը չի կորցնում: Ընկուզենու փալտից պատրաստում են բարձրորակ կահ-կարասիներ, հրացանի փալտե մասեր, ողանավերի պրոպելլերներ և այլն:

Ընկուզենին ունի բազմաթիվ փոփոխակներ:

Սրտնց խմբավորման հիմքում դրվելու ինն.

ա) ընկուզի կեղևի տարբեր ամրության (փափուկ, կարծր և կիսակարծր սորտեր),

բ) ընկուզի ձեփ և մեծության,

գ) ընկուզի միջնապատերի բնույթի (վորով պալմանափորված և միջուկը կեղևից անջատվելը),

դ) ընկույզի քիմիական կազմի (ճարպով հարուստ փոփոխակներ) հատկանիւները:

Հիմք ընդունելով սոցիալիստական արտադրության պահանջը, կեկարագրվեն Հայաստանում տարածված, տեղական անուններ կրող ընկուզենիների միքանի սորտեր միայն, վորոնց դրական հատկանիշները հիմք ընդունելով, կարելի յե առաջարկել արագարությանը վորով արդյունաբերական, արժեքավոր սորտեր:

Հալաստանում կան և հաստ, և բարակ կեղեսով փոփոխակներ. ավելի շատ տարածված են կեղևը բարակ, ներսի մակերեսը հարթ, բարակ միջնապատով, միջուկը կեղևից հեշտությամբ անջատվող սորտերը, վորոնք գլխավորապես պիտանի յեն սեղանի ողանափործման համար:


1. Խսպենի.—Պտուղները մյուս սորտերի համեմատությամբ մեծ են: Ընկույզը ձվաձեւ, սուր ծալրով: Կեղևը բարակ է, շատ կոտրվող, ներսի մակերեսը՝ հարթ, միջաւկի՝ դույ-

նը՝ սպիտակ-դեղնավուն, հեշտությամբ կեղևից անջատվող: Պիտանի յե սեղանի գործածության համար:

2. Սպիտակենի.—Պտուղը միջին մեծություն ունի. Ելիուածեւն է: Կեղևը միջին հասառություն ունի, ներսի մասից խորդություղ մակերեսով, միջուկը դժվարությամբ և անջատվում կեղևից, սպիտակ դեղնավուն գույնի: Պիտանի յե վերամշակման և թարմ սպառման համար:

3. Կտորենի.—Պտուղները միջին մեծության են, կլորավուն ձեփ, ծալրը սուր: Կեղևը հաստ է, գժվար կոտրվող, միջուկը կեղևից դժվար և անջատվում. միջուկի փալտային միջնապատը հաստ է և ծալրավոր: Պիտանի յե վերամշակման համար, վորակու մուրաբայի հումույթ:

Վերը նկարագրված սորտերը Խզկենի ու Կարմրկենի սարտերի հետ տարածված են Զանգեզուրի Մշանաւմ:



Նկ. 2. Սպիտակենի



Նկ. 3. Խենենկենի

1. Խենենկենի.—Ծառը փարթամ աճեցողաւթյուն ունի, լեռկարակյաց և և բերքատու: Պտուղները տարբեր մեծության են և ելիպսի ձեւ ունեն: Կեղևը բարակ է, ներսի մակերեսը՝ հարթ, միջնապատը՝ փոքր: Միջուկը հեշտությամբ բաժանվում է կեղևից, դեղնագույն յե: Պիտանի յե սեղանի գործածության համար:

2. Սովորական.—Պտուղը կլորավուն է, փոքր ըթով: Կեղե-

վը միջին հաստություն ունի, ներսից աննշան թաղանթով ներսի մակերեսը շատ քիչ խորդուբություն ունի, միջնապատը փոքր է, միջուկը հեշտությամբ բաժանվում է կեղեփց ունի գեղին գույն:




Նկար 4. Անլատական

3. Կոռու.—Ունի մեծ և փոքր պտուղներ: Կեղևն ու միջնապատը հաստ են: Միջուկը կարմրավուն-գեղին գույն ունի, դժվարությամբ ե բաժանվում կեղեփց: Պիտանի յե բացառապես մուգաբաներ պատրաստելու համար:

Վերը նկարագրված լիրեք սորտերը տարածված են Յերեւանում և Աշտարակի ու Կոտայքի շրջանում:

Մեղրու շրջանում տարածված են դլավորապես Որդուբաթի (Ա.ՍԽՀ) սորտերը, զորոնք աչքի լին ընկնում ընկույզի մեծությամբ, բարակ կեղեռվ և վորակյալ (համով և սպիտակ գույնով) միջուկով:




Նկ. 5. Կոռու

Բացի վերը նկարագրած սորտերից, Հայաստանի տարբեր շրջաններում մեծ քանակությամբ տարածված են բարձրորակ (բարակ կեղեռվ, ճարպի բարձր քանակով, խոշոր պտուղներով, բարձր լերքատվությամբ) սորտեր, զորոնք դեռևս հայտաբերված և լրիվ ուսումնասիրված չեն:

Մեր առողջավոր կոլանտեսականների, կոմիերիտականների, խրճիթ-լաբորատորիաների աջակցությամբ հնարժագոր ե հայտա-

բերել անզական սորտերը և լայն չափերով աարածել արտադրության մեջ:



Նկ. 6. Արդարաբարի

Ընկուզենու տեղական սորտերը, Դրիմի և արտասահմանյան սորտերի համեմատությամբ խոշոր առավելություններ ունեն:

Ծանօթություն.—Վերը նշված սորտերը նկարագրելիս սրանց նկույզների քիմիական բաղադրության մասին խոսությունը գանի վոր գեռես սրանց քիմիական անալիզները չեն կատարված: Պըտուղաբանջարաբուծական Զոնալ կայանը սորտերը վորոշելուց հետո, վերջնը միայն անցել և այս աշխատանքներին:



Նկ. 7. Մեղրու

Ընկուզենին, համեմատած մյուս բոլոր պաղատառ տեսակների հետ, շատ քիչ պահանջկու և դեպի հողը: Մական բալոր հողերը մինավասար բարենպաստ չեն ընկույզնու աճման և զարգացման համար:

Ընկուզենին հաջող աճում և չար, թեթև, կավակբային ավազակախյային, կավա-ավազային, բարքարստ և խճային հողերում: Վատ և աճում ու զարդանում շատ խսնավ, խիստ

ամուր հողերում: Ընկուզենիների տճեցման նպատակահարմաք վիքքը պետք է համարել հյուսիս-արևմտյան և արևմտյան կողմերը: Յերիատսարդ հասակում ընկուզենին ընդհանրապես նուռը և լինում և խիստ ցրտերից տուժում եւ Ընկուզենին իր յերկար խոր և լայն տարածվող արմատային սիստեմով հողից մեծ քանակությամբ սննդանլութեր և վերջնում և բավականին աղբատցնում ե հողը, հետևապես և անհրաժեշտ և պարտրատցնել ընկուզենու գբաղեցրած հողը:

Մի շարք անտլիզները ցույց են տվել, վոր 100 կիլոդրամ ընկույզն իր մեջ պարունակում է 1,2 կիլոգրամ աղոտ, 0,33 կգ ֆոսֆորային թթվուտներ և 0,36 կգ կալիում: Յեթե, որինակ՝ մեկ ծառի բերքը ընդունում ենք $120-150$ կիլոգրամ, ապա ամեն մեկ ծառի համար հողին պետք է տալ 1,8 կգ աղոտ, 0,49 կգ ֆոսֆորաթթվուտներ, 0,44 կգ կալիում: Յելնելով սույն ավյաներից, յուրաքանչյուր ծառին պետք է տալ 12 կգ աղոտային, 3,53 կգ ֆոսֆորային և 0,9 կգ կալիումական պարագաներ: Գոմաղբ գործադրելու դեղքում ես պետք է կմաք ընդունել սույն ավյաներ:

Հակուղենին սովորաբար բազմացվում և սերմերով. հաճախ անհրաժեշտ է լինում զարգացվելք սորափ հատկանիշները մաքուր պահել, այս դեպքում բազմացումը կատարվում է պատվաստի միջոցով:

Ըսկույզի ցանքը կարելի է կատարել և աշխանը, և գաղ-
նանը: Յեթև ցանքը գարնանն է կատարվելու, ապա սերմ ան-
հրաժեշտ և ստրատիֆիկացիալի լենթարկել՝ պահել ավագի մեջ:
Սրա համար անհրաժեշտ է 80 սմ խորությամբ և մեկ մետր լայ-
նությամբ փոս փորեր Այս փոսի մեջ մեկը մոռախն հաջորդող
4-ից 5 շերտ ավագ և ընկուզենաւ սերմ շարելուց հետո, յերբ
փոսն արդին լցված է, յերեսից ծածկել 2,5 սմ հաստության
խոռի և 15—20 սմ հողի շերտով:

Գարնանը ընկուգենու սերմը ցանվում և լավ մշակված, փափուկ մարգերում 5 սմ խորությամբ, շարքը շարքից 20-25 և բույսը բույսից 3-4 սմ ճեղավորության վրա, Ցանելուց հետո ան-

միջապես ջրվուռ է: Յանելիս անհրաժեշտ է ընկույղի սուր մասըն ուղղել վերև, վորպեսզի բուխի ցողունն ուղիղ աճի:

Հնկուզենու ցանքը նոսրացնելիս ու վերատնկելիս պետք է շարքը շարքից 20—25 մմ և բույսը բույսից 10 սանտիմետր հեռավորություն ընդունելի Ընկուզենին ընդունակ և կենտրոնական առանցքային արմատը դարձացնելու, սակայն անհրաժեշտ է ըստ հնարավորին ճյուղավորել նաև կողքի, յերկրորդական արմատները, նատկապես յերիտասարդ հասակում:

Այս անելու համար պետք է ընկուղենու նորածիլ առան-
կը տեղափոխել գեռ կանաչ վիճակում, քանի վոր սրտ հառա-
ռւ մասի արմատն անհամեմատ ավելի արտգ է աճում, քան
նրա զերերկը կանաչ մասերը:

Վերատնկման (պիկիրովկա) ընթացքում բաւլի արժատաի մեկ յերրորդական կամ կես մտու պետք եւ կարել և հետացնել սրա- նով յերկրորդական տրմատների զարգացման համար բարե- նպաստ պայմաններ են ստեղծում:

Ըսկուզենին նույն աշնանը կամ հաջորդ տարվա վաղ դար-
նանը տեղափոխում են ոնկարան, վորտեղ և պահում են յեր-
կուսից—յերեք տարի:

Բացի վերը նկարագրած ձևից, ընկուզենու ցանքը կտրելի
յե կատարել հաե անմիջապես անկարահում, ցանելով սերմբ
սերմից 10 մմ և շաբաթը շաբաթից 90 մմ հեռավորության վրա,
հեռագայում բռւյսը բռւյսից 35—40 մմ հեռավորության վրա
նորացնելու պահմանով:

Մշակման այս սիստեմի դեպքում՝ հատուկ գործիքների մի-
ջոցով, հողի տակից կարգում և արմատների մեկ լեռբորդ կամ
կես մասը և այսպիսով հիմնականում պիկիրավկա յե կատարվում,
առանց բուլսը տեղից շարժելու:

Ընկուղենու ազնվացումը, այլ պաղատու տեսակների համեմատությամբ, հեշտությամբ չի ընթանում:

Ընկուզենու համար իբրև պատվաստակալ կարելի յէ զարծագընել նրա բոլոր տրտերը և ընկուզենու ընտանիքին պատկանող բոլոր տեսակները:

Սրանցից ամենահաջող պատվաստակալը ու ընկույզն եւ

մգոսի մրտվթաղման յո 08—02 դ մրտվթամսով յո 05—07
դ տնկրումցոտ Ազմատակ կմց քամուտաբոց գլ մսիտմառց
եպամսի և կաղը զ զբար վոսի ոզիմսիտենց իսկոմի տառետ
զմզուտբուտ մսի Ազմափ վտին ոզեպմ մարտաց ուղեղուտ մմդու
շոք Լզմափ մգոսի մրտվթամսով յո ԶԵ բասեաց քակմց դ մրտվթ
ամսով յո ԶԵ—ԶՑ Լզմափ ժագեն մեսչ մզտումտակամուու
դ ժագեն մեսչ տելու շուտ ովրա ձզմիւ-րակմի նուլիկց

ասք օչ իսլզմսիտենց բասուրան
աչ մտակց կցը՝ (իսդք վուսկակատած) տմի զամբթամսիտաց մմա
տափեմենցառի վիպաց 6. հակը

զցը շ՛լ նվորուտ մորան դ նվմման
մմման լզկուտ դ ժագեն բասուր
առեաց զտկտպց զ ոզդկերակույ
մմզկիտոգտ

շատանետն ուսիր զոժ բանցառ
ան դ մրտազ մման վլդիտ ոչի
զերակույ նվորուտ ուր մար
աչ շոզերակույ հջուտամսու զ՛
րանացաք մզուտայի ովմզուտաբուտ
մսի զոյած Նզմենքմսն ուութիւն
շանեն զցը դ ժագեն կազբար
ուղեղուտ բասուրանց զտկտպց
բկց դ շոզերաց նվզումտակուտ մմ
մորումտրմց բակ մմզմիկց

ովհենվն դ ժագեն զտմու մկառ
ան վզաւագեն զ պցազտամտակուտ
ոզդկերակույ սպն զոյած բանց
ման դ ուսմբթանցեն զտկտու
տամաճ տմի շոզերակույ զազ


տմի ուսմբթամսիտաց յո 06
նվմման մմման դ յո 07—08
նվուրամ նորան զ բասկա նվամսի զամուկուտ զ բասմենուու
մմզմիկուտ մզտումտ նմսնաչ զ լզեկ զդնմտ զտուտիտուն մմզ
հտուտբուր զմտ զ բասուր ոզետպակտուցմի մմզկիտուցմ

ոզմեն գումն զ բասութակտան մտմուցմասու զմցո
մուս ստց նվմմի ոզկիտցմակ մզուց կուպարտք զտմ
ովիտ իսմզուկտուցմն զ բասկա տեսու զուցմ օտիկտու իսեսչ
յո Զ—Զ մոտք քտիտատիտուն մսի փունզուցմ զցը մեսչ զ բասինց
մզմման զ զցը վեկմտ տմիտան բակ նորմզ մուս զ բասու
ուփտեգտ մմզուրամ քտիտատիտուն ոզցութակտան իսկիքայ դ բան
տմի իտու իսվիտու մմման տմի տմի մտուտիտան իսկիքայ դ բան
ու զ ժագեն մմզումտակ մուկտու մմզումտակ դ ժագեն մմզումտակ


բանց մեզցտուի դ մրտվթաներու զտկտպսնկմաց զ բասմակ նվո
տու տայ վլկիտատարմու նվեսն զ բասուց մրտվթաներու մզմ
ուի մմզուրամ զակուտաւակմց քամնտրմնու իսմզուցու շոզերակուց
զ բասիքմսնուտն լոկտատիտուն ոմմի բասմենցն ուր Զ

ա զցը քտիմցտու վիգնյա եղչ իտ
տողցրտ վտույտառետոցմակ
նվորունցտանակ դ բասիպարտու
մրտվթաներու մկնեկ վլտկտատու
տուն դ ոգէ քտինու մմզմէտ
սցն մմզն մուումտ ետի բակ
(իսմզմէտ քողչ) ովմզուց նմու
կմցն տիտարտ բանցսեցու վտ
ուտիտուն դ բասիմտուն մտուն
տակտմն լ իսմենցը վտույտառետ
ուպամակ դ վտույտառետմէտ
զ բասութիւնետ զվոզերակույ

շ զ տկ
տողցրտ ովմզուցամբթամցտամն
ուումտու մամու եսնզուտ զնվուտ
տուու ուտ մսի զոյած վզու ուսմբթակտուն մսիզմտու տովու
մնզումտաց շուղենտօ նու կուպմու մմզուկտուտու զ բասուն
ուզմտու զ բակ ուտ վմզամտ զվչուտացան վզու
կտտուն մրտանիւնետ իսմենցը վտույտառետ շոզերակույ



Բվուրամ նորան զ բասկա նվամսի զամուկուտ զ բասմենուու
մմզմիկուտ մզտումտ նմսնաչ զ լզեկ զդնմտ զտուտիտուն մմզ
հտուտբուր զմտ զ բասուր ոզետպակտուցմի մմզկիտուցմ



բեր: Տնկնիու ժամանակ պետք է աշխատել չվնասել արմատները, հետացնել սրանց վնասված մասերը և նորը տնկել:

Վերը նեած աշխատանիներից նետու անհրաժեշտ է լուրջ զբաղվել այգու հետագա խնամքի գործով:

Ընկուղենու սաղաթին ու բունը ճիշտ ձևավորելու համար հիմնական հողամասում, տնկելուց 2—3 տարի հետո, թեթև ետ պետք է կատարել, Զեփավորելուց հետո ծառին պետք է թողնել ինքնուրույն աճի, յերբեմն կարելով նրա չարուկները, վնասված ճյուղերը և դեսպի սաղարթի ներմն աճող այն ճյուղերը, վորոնք խախտում են սաղարթի ձևը, շփվում են հիմնական ճյուղերի հետ, շվաք են աճում և այլն:

Ետ կարելի է կատարել նաև այն դեպքում, եթե ցանկանում են բարձր բուն ստանաբ: Հարավի պայմաներում կարիք չկա այս անելու, քանի վոր բարձր բունը յենթակա յերեկ այրվածքներին, այսուղի ցանկալի յե ստանալ փոփած, լայն սաղարթով ընկուղենի, վորովհետև որս փինակում կարելի կլինի բավարարել ընկուղենու լուսի և աղտատարածելու մեծ պահանջը:

Այդու հետագա խնամքը կայանում և հաճախակի վոռովգնան, հողի փիրեցման, հիվանդությունների ու վնասատուների գեմ պալքարելու մեջ: Ոգտագործելով ընկուղենու միջարքային տարածությունները, հարավոր կլինի հողամասից անուղղակի արդյունք ստանալ մինչև ընկուղենու տնկվածքից հիմնական բերք կատացվի:

Միջարքային տարածություններն առաջին տարիներում կարելի յե զրագեցնել բանջարանոցային բույսերով, հետո հատապտուղներով, հատկապես սրանցից ախալիսի տեսակներով, վորոնք դաշտային պայմաններում ընկուղենու շվաքից չեն տուժում:

Միջարքային տարածություններում կարելի է տնկել նաև ցածրահասակ ու կյանքի կարճ շրջան ունեցող սալորենիներ, դեղձենիներ և այլն:

Ընկուղենին լավ խնամքի գեպքում սկսում է պաղարել 8—10-րդ տարում: Շառի պաղարերության սկզբնական շրջա-

նից սկսած, սրա տարիքն ազերանալու հետ միասին, ավելանում է և բերքը, սակայն մինչև մի վորոշ ստաման, վորից հետո բերքի քանակը՝ առժամանակ կայուն մնալուց հետո՝ աստիճանաբար իջնում է:

Ընկուղենու տարիքը տարբեր հեղինակների կողմից 200—400 տարի յե սահմանվում: Լրիվ բերքատվության շրջանում ծառի միջին բերքը 300—400 կիլոգրամի յե հասնում (40—50 հազար հատ):

Պառողը հասունանալուց պաղապատիճը ձաքճքում և մեծ մասամբ յերկու մասի յե բաժանվում: Մինչ բերքահավաքը՝ յերաշտ լինելու գեղքում, պետք է բերքը հավաքելուց յերկու շաբաթ առաջ ջրել ընկուղենին, սրանից պաղապատիճները ձաքճքում և ընկույզները հեշտությամբ անջատվում են: Ծառը խիստ յերաշտից առժելուց պաղապատիճն այրվածքներ ստանում ունի, ընդուակ կպչում և ընկույզին և դժվարացնում բերքը մաքրելու աշխատանքները: Առհասարակ պաղապատիճները հեշտությամբ չեն անջատվում ընկույզից, վորի համար ել պետք և պառուղները տաքանում և պաղապատիճները հեշտությամբ պոկվում են:

Անջատված ընկույզները պետք է լցնել ջրով լիքը կիսատակառների, չաների մեջ, ջրին սողայի փոշի խառնել և փայտեթիակով լավ խառնելուց հետո ընկույզները հանել, փոել արևի տակ և հաճախ շրջելով ու խառնելով չորացնել:

Ընկուղեները արևի տակ, բացի չորանալուց, նաև սպիտակում են: Ընկուղն ավելի լավ սպիտակացներու համար հատուկ կամերաներում ծծմբածուխ են տալիս, վորից հետո տեսակադրում ու պահում են չոր պահեստներում:

Ընկուղենին շատ քիչ վնասատուներ ունի, հավանորեն առեւների յուրահատուկ հոար հալածում և վնասատուներին ու



Նկար 10. Ընկույզի պատկերի վիճակ պտուղը

Ընկուզենուն վնասում և ընկույզի պտղակերը, վոր կըրծերով պտղապահինի պտղակոթի մօտի մասը, ներս և մանում ընկուզի մեջ և ուտում և միջուկը:

Պտղակերի գեմ պայքարելու հիմնական միջոցներից մեկը բունը և հաստ ճյուղերը հին կեղևից խնամքով մաքրելն է:

Վորսող գոտիներն ևս սգատգործելով կարելի և պայքարել պտղակերի դեմ: Այս զոտում՝ պտղակերի թրթուրները սողալով ծառի հին, մաքրված կեղևի վրայով, աշնանը մասսալորեն ժողովում են և սրանով հնարավորություն և ընձեռվում արորելով վոչնչացնել նրանց: Պտղակերի պատճառած վնասի հետեւ փանքով ծառից ընկած պտուղներն ևս պետք և հավաքել և այրել:

Ընկուզենուն վրա լինում են նաև լիմիներ ու տիզեր, փոքր առանձին վնաս չեն պատճառում:

Ընկուզենուն հիվանդություններից ամենատարածվածը տեսվելու բժամուրյանն է, վորը վնասում և յերիտասարդ շիզերին, տերեններին ու պատշներին: Հայտատանի, պայմաններում այս հիվանդությունը խոշոր վնասներ չի պատճառում, քանի վոր զարգանում և այն ժամանակ, յերբ պտուղներն արդեն հասնում են:

Կապիտալիստական մանր, փոշիացած, անհատական անտեսությունների պայմաններում ընկուզենին իրենից արդունաբերական առանձին արժեք չի ներկայացրել: Ընկուզենին, չհաշված անտառներում աճող վայրի տեսակները, հատ ու կենտանկվել ե (յեթե չասենք թռչունների բերած սերմից ծլել և) մեծ մասամբ մեծ ճանապարհների վրա, հեռու ընկած դաշտերութ, խոր, դժվարամատչելի կիրճերում և անարդել յենթարկվել ե մարդկանց, անասունների պատճառած քամահաճուկքին ու վնասվել:

Սոցիալիստական գյուղատնտեսության պայմաններում ընկուզենուն նման դիմացկուն, արդյունավետ, բերքատու կոլտուրան պտղատու մյուս տեսակներին նամանավասար կերպով պետք է մակը մեծ տարածությունների վրա յեկ այն ել ագրոեկտիկական անհրաժեշտ պահանջները բավարարող ձեվերով:

2.

Ն Ե Ե Ն Ի

Նշենին (Amygdalus communis L.) պատկանում է նշենիների ընտանիքին (Amygdalaceae): Բստ կարլ կոխի՝ նշենու հայրենիքը Ասորիքն է, հատկապես Անտիլիքանանը:

Նշենին տարածված է Սպանիայում, Իտալիայում, Ֆրանսիայում և Թուրքիայում:

Նշի տարեկան ընդհանուր բերքն Սպանիայում հասնում է մինչև 140.000 տոննի, Իտալիայում՝ 70—100.000-ի, Կալիֆորնիայում՝ 4—16.000-ի և Թուրքիայում՝ 2—3000-ի:

ԽՍՀՄ-ում նշենին տարածված է Միջին Ասիայի հարավային մասերում (Ուզբեկստան, Կիրգիզիա, Ղազակստան), վորտեղ ու թե վայրի և թե կուլտուրական վիճակում աճում ու զարգանում ե վողջ անտառներով:

Տարեկան ընդհանուր բերքն արտեղ հասնում է 350 տոննի: Նշենուն, վորպես առավելագույն չափի չորադիմացկուն պտղատու տեսակի, կարելի յե հանդիպել նաև Սեվալիյան շրջանների հյուսիս-արևմտյան մասերում:

Նշենին այս շրջաններում հաջող աճում ու զարգանում է ամենաաղքատ, չոր, հումուսա-ածիստային, սաղր և նույնիսկ

քարտա հողերում, վորոնց վրա պաղատու այլ տեսակներ չեն աճում:

Նշենին ամենահաջող կերպով զարգանում է լանջերում. ընդհակառակը, զաշտալին գոտում ու հովիտներում սրա փայտանյութը վատ և հասունանում, վորի հետևանքով և տուժում և սառնամանիքներից ու խեժահոսությունից և վատ և պաղաքերում. հետևապես մեր զարմաններում նաև տուավել չափով պիտանի յեւ նախալեռնային և լեռնային պաղաքութության հոմաբ:

Անդրկովկասի արևմարդան մասերում, ավելի ճիշտ Բադվին մաս վալրերում՝ Ապշերոնյան թերակղզու շրջակայքում, չնայած խիստ սակավ մթնոլորտային տեղումներ են լինում, բայց և այնպես նշենին հաջողությամբ աճում և բարձրորակ պաղատու տեսակ և համարվում, քանի վոր հարմարվում է չորային ու տաթ յեղանակներին: Նշենին արտեղ լուրջ ուշադրության ու խնամքի առարկա յեւ հանդիսանում: Մշակվում է Մարդաքյանի մատ մի քանի գյուղերում:

Վրաստանում թիֆլիսին մատ, Խուգավյան անտառում ներկայումս դաւն ու քաղցր նշենու 25 փոփոխակ գոյություն ունի:

Հայաստանում նվազ չափով նշենու կարելի յեւ հանդիպել Մեղրու, Միկոյանի, Ալլահվերդու, Կոտայքի և Աշտարակի շրջաններում:

Նշենու բարձրությունը համար է 5—10 մետրի, իսկ սարքը՝ բացառիկ զեպքերում միայն 100—130-ի:

Նշենին ունի գլխավոր ճյուղավորված արմատ, վորը բարգական խորն և տարածվում: Նշենու գլխավոր արմատը կը բելու գեպքում նրա կողքի արմատներից մեկն ուղղաձիգ ուղղ գութեամբ աճում և փոխարինում է սրան:

Հաջող զարգացած կողքի արմատները տարածված են 15—45 սմ. խորության վրա:

Նշենին ունի նշտարածե կամ յերկարավուն-ձվածիր, տարքեր չափի սրբությամբ, տամասավոր տերևներ, վորոնք ձմեռ թափվում են:

Տերեկի հիմքում, կամ թե կոթունի վրա զանգում են լեռի հուսից—չորս գեղձ: Սրանք կպչուն, շաքարային մասսա յեն արտադրում, վորով և հրապուրում են մեզուներին ու ճանճերին: Տերեները զարգանում են զըլ-իավորապես ծաղկելուց հետո:


Ծաղիկները հնգատիպ են, լերկանու. զարգանում են շվերի ծայրերին 2—3, յերբեմն 4—7 հատ միասին. ծաղիկը յերբեմն զարգանում է տերևների հիմքի մոտ, կողքի յերկար ճյուղերի վրա: Բաժակաթերթիկ-ները կանաչագույն են, անշան տեսքով, պսակաթերթիկները սպիտակ, բաց-վարդագույն, յերբեմն մուգ վարդագույն, կամ թե վարդագույն բծերով:

Սերմարանը միարուն ե, լերկու սերմարարողը ջուղ. որուացից մեծ մասմբ մեկն է զարգանում:

Առեջները 19—42, հաճախ 20—30 հատ են լինում. վորպես կանոն, սրանք սոնուց կարճ են լինում և փաշանոթները սպիին չեն համարում:

Նշենու շատ փոփոխակներ կան, վորոնք թեև ինքնափոշուման վորոշ հնարավորություններ ունեն, սակայն չեն ինքնափոշուման (ստերիլ են մնում) և խաչածե փոշուման կարիք են զգում, հակառակ պարագայում մնում են անպտուզ:

Խաչածե փոշումանը կատարվում է միջատների, ոլխափորպես մեզուների միջոցով:



Նկար 1. Նենի 1.—պտուղներն ու տերվերը. 2—ծաղիկները. 3 յիշ 3b—ծաղկի կազմության սխեման. 4 յիշ 5—պակաթերթիկներ ներին յիշ արտաքին կողմերից. 6 յիշ 7—տածքներ յիշ վարսանդ. 8—սերմարանի կազմության սխեման (բնդլանտիտն կտրվածքը). 9—միջուկ. 10—միջուկի կազմության սխեման՝ կտրվածքով. 11 յիշ 12—սերմերը բաղանքի մնջ յիշ նրա կտրվածքը

Նշենին ծաղկում ե սկսած մարտ առևի վերջերից մինչև ապրիլի սկզբները. Կրիմում՝ փետրվարի կեսերին, Բագվառմ՝ փետրվարի վերջերին և մարտի սկզբներին, Հայաստանում՝ մարտի վերջերին կամ ապրիլի սկզբներին: Վորովս կանոն, ծաղկումը շատ տուատ ե լինում: Պտուղը կողքերից սղման, շրջապատկան ե մաշկանման, ուտելու համար անսկետք պաղապատիճով: Վերջինս լրիվ հասունանալուց հետո հեշտությամբ անջատվում է միջուկից:

Այս շրջանում պաղապատիճը մեկ, կամ յերկու կողմից, նայած սորտին, ճեղքվածքներ ե տալիս: Միջուկը՝ կազմված ե տարբեր հաստության և ձեր փալտային կեղենից ու սերմից:

Կեղենի ձեն ու հաստությունը սորտի կարեռադույն հատկանիշներն են:

Մի դեպքում սա փափուկ, բարակ, հարթ և փայլուն ե, իսկ մի այլ դեպքում՝ ամուր, հաստ, խորդուբորդ:

Սերմը, վորպես կանոն, տափակ և և ծածկված բարակ, շաղանակագույն մաշկով: Շարիլները, սերմաբողբաջն ու արմատիկը ծածկված են բարակ, սպիտակ թաղանթով:

Նշենին չոր մերձարեադարձային մյուս պաղապատ տեսակների համեմատությամբ ավելի ցրտադիմացկուն ե. սա 20-ից 25⁰(3) սառնամանիքներին դիմանում ե:

Taylor-ը գտել ե, վոր լրիվ չբացված ծաղկաբողբոջները տուժում են—4,5⁰(3) ջերմաստիճանի դեպքում, իսկ ծաղկի համար պասկաթերթիկները թափվելու շրջանում—2,2⁰(3) ցուրտը վտանգավոր չե, չնայած վոր հաճախ—0,5—1⁰(3)-ում ծաղիկները՝ այլ անբարենպատ ֆակտորների հետ կաղված պատճառի հետևանքով՝ ցրտահարվում են:

Դեռ նոր գոյացող պտուղներն են սառնամանիքների հանդեպ ավելի նրբազգաց են:

Վտանգավոր են նաև ծաղկման և պաղի կազմակերպման շրջանում որվա ջերմաստիճանի խիստ տատանումները:

Կաղնու վնասատուներն ու հիվանդությունները բավական շատ են, բայց քիչ են ուսումնասիրված:

Հայաստանում, դիմավորապես նրա հյուսիս-արևմտյան մասերում ամենաշատ տարածված վնասատուներից մեկը հոնդիսանում է ընկուզենու փղիկը. սա մոխրանման գույնի բզեզ ե՝ մոտ յոթ-ութ մմ լերկարությամբ: Դեռ ևս կաղնու կեղեվը փափուկ յեղած ժամանակ բզեզը ծակում և յուրաքանչյուր պտղի մեջ մեկական հատ ձու յե դնում: Չվից առաջացած թըրթուրներն ապրում են նոր ձևավորվող փափուկ միջուկի հաշվին և ծակելով կաղնու արդեն ամրացած կեղեր, դուրս են գալիս ու թագնվում հողի մեջ:

Հողի մեջ բզեզը հարմայակի յե փոխվում, ձմեռում և գարնանը հարսնյակի շրջանից փոխվելով բզեզի՝ դուրս ե գալիս նորից ու կը կնում իր կյանքի ցիկլերը:

Սրա դեմ պայքարելու համար վաղ առավոտական պետք ե թփերը թափ տալ բրեգենտի վրա, թափած բզեզները հավաքել և վնասված կաղինների հետ միասին ալլել:

Միաժամանակ պետք ե կաղնու այգու հողը խնամքով փորեր, վորի հետևանքով և կոչնչանան սրա միջի հարսնյակները:

Յերեվանում կաղնու ամենատարածված վնասատուն լինեն եւ Լվիճները տեղափորվելով տերևնի ներքեւի լերեսի վրա, ապրում են գաղութներով և ծծելով տերևնի հյութը, չորացնում են այն: Լվիճով վարակված ստակերը պետք ե սրսկել կալիֆարնիական հեղուկով:

Հայաստանի Նախալեռնալին շրջաններում և անտառներում կաղնու հիվանդություններից մեծ չափերով տարածված է ալրային ցողը:

Բոլոր տեսակի վնասատուների ու հիվանդությունների գեմ պայքարի Նախալեռնալին հիսնական միջոց պետք ե համարել ալրու ուղաղիր խնամքը, պարտացումը և

անկիները մեկը մյուսից ընդունված հեռավորությամբ աղն-
կելը:

Այս պայմաններում ողն ու արեի լուսն ազատ մուտք
են գրձում թփի մեջ, իսկ արեի ճառագայթների առկայու-
թյան դեպքում լեռբեք հիվանդությունները չեն զարգանում:

Այսպիսով կաղնին առողջ վիճակում պահելու, երա-
բուն տնը, զարգումը յեզ ամեն սարվա բարձր բերքավո-
րյան ապահովելու համար անհրաժեշ է վերնիշյալ բոլոր
ազգածեռարկումները ժամանակին յեզ նոցրիս կատարել:

4.

Թ Զ Ե Ն Ի

Թզենին, *Ficus Carica*, պատկանում է թթաղզիներին: Նրա
հալրենիքը Փոքը Ասիան ե:

Դեռ շատ հին ժամանակներից թզենին տարածվել է Մի-
ջերկական ծովի ափերին: Արևելքում նրա տարածման հուսի-
սային սահմանները հանդիսանում են Ղումի հարավային մասերը,
Անդրկովկասը, Ուզրեկստանը, իսկ արևելուոքում (Յեվրոպա-
կամ) ավելի հուսիս և տարածվում: Թզենին Ղում և Անդրկովկաս և
բերվել հույների միջոցով: Ներկայումս մեծ քանակությամբ
թզենու կարելի լե հանդիպել վայրիացած վիճակում թե Ղու-
մում և թե Անդրկովկասում: Թզենին իր տարածման հյուսիսա-
յին գոտում լինում է թփի ձևով, իսկ հարավային շրջաններում
միաբան ծառի ձևով: Վորպես ծառնա ունենում է 6—8 մետր
բարձրություն և մինչև 35 սմ տրամագիծ ունեցող բուն: Թզե-
նու յերիտասարդ ճյուղերը յերկար ժամանակ պահպանում են
իրենց կանաչ գույնը և ծածկված են լինում խիտ թափով: Վո-
րոշ սորտեր թափ չեն ունենում: Տերեները մուգ-կա-
նաչ գույնի լին լինում, հաստ, խորդուբորդ մակերեսով և ներ-
քեի կողմից թափով ծածկված: Սրանց մեծությունը և ձեր

բազմազան են. պատահում են ամբողջական և 3—5 ըլթակա-
վոր թիթեղով տերևներ: Թղենին մշտադալար չի, նրա տերե-
ները թափվում են:

Թղենին իր բոլոր մասերում պարունակում եւ կաթնա-
նման մածուցիկ հլութ, վորին կպչելիս, մարմնի բաց տեղերում
գերբեր են առաջանում. պաշտամբելու համար թղենու վրա աշ-
խատելիս պետք եւ ձեռնոցներ գործածել:

Ծաղիկները կազմում են յուրահատուկ ծաղկաբույզեր, վո-
րոնք իրենց արտաքին ձևով նմանում են տանձի պտղին և
դադաթում ունեն նեղ անցք:

Թղենու, ալսպես կոչված՝ «պտուղը», վորին թուղ ենք ան-
վանում և ուտում ենք, դա ծաղկաբույզերի ծաղկական ե, վո-
րոնց մեջ հասունացած վիճակում իրա դասավորված են լի-
նում թղենու իսկական պտուղները՝ սերմերը: Թղենու ծաղկա-
բույզերի մեջ պատահում են չորս տեսակի ծաղիկ.

ա) արական ծաղիկներ—ունեն միայն առեջքներ,

բ) իգական ծաղիկներ—յերկար և լրիվ զարգացած վար-
սանդով,

գ) իգական ծաղիկներ—յերկար և սաղմ չունեցող վար-
սանդով,


դ) իգական ծաղիկներ—կարճ, չզարգացած վարսանդով և
յայն ու բաց անցքով:

Թղենու ծաղկաբույզերը, ապա և պտուղներն առաջանում են
առավա ընթացքում 2—3 անգամ: Թե վայրի և թե կուլտու-
րական թղենիները կրում են կամ միայն արական կամ իգա-
կան և կամ թե խառը ծաղկաբույզեր:


Թղենիները միմյանցից արտաքին տեսքով չեն տարբեր-
վում, կարելի լե տարբերել միայն ծաղկաբույզերով: Արական
բույսերի ծաղկաբույզերն իրենց մեջ պարունակում են արա-
կան ծաղիկներ և չզարգացած ու պտղաբերող իգական ծա-
ղիկներ:

Արանցից գոյացած «պտուղներ» շուտով դեղնում և թափ-
վում են: Իգական բույսերի ծաղկաբույզերը պարունակում
են իրենց մեջ միայն իգական ծաղիկներ և տալիս են զլխավո-
րակն լրիվ զարգացած և ուտելու համար պիտանի պտուղներ:


1. Արական թղենիներ, վորոնք կտպոիֆիկներ են կոչվում,
ընդհանրապես յերեք անգամ «պտուղ» են տալիս.



Նկ. 1. ա—արա-
կան ծաղիկ



բ—իգական ծաղիկ



2. իգական թղենիները 2—3
անգամ պտուղ են տալիս.

ա) առաջին անգամ՝ ապրիլից—
ուրոստոս ժամանակամիջոցում: Այս
սեզոնում ստացվող «պտուղները»
վորոշ սորտերի մոտ ուտելու հա-
մար պիտանի լեն:

բ) հունիսից—ոգոստոս ժամա-
նակամիջոցում: Այս սեզոնում

գ—չզարգացած իգական ծա-
ղիկ՝ ալոյն տեցքը, ի—բլա-
տաժագայի ձուն

պտղաբերող բոլոր սորտերի պտղուղները լիովին պիտանի յէն սկագործման համար.

Դ) ուշ աշնանը՝ նոյեմբերին։ Այս սեզոնում վոչ բոլոր սորտերն են պտղաբերուժ, իսկ ստացվող պտղուղներն ել վորակով ցածր են լինում։

Թղենու պտղուղները գոյանում են յերիտասարդ ճյուղերի վրա և դասավորված են լինում տերևածոցերում։

Թղենու առաջին պտղաբրությանը զուգահեռ, աճող ճյուղի վրա առաջանում են յերկրորդ սերնդի պտղուղները և շատ հաճախ միևնույն ճյուղի ներքեւի մասում տեղափորված են լինում առաջին շրջանի պտղուղները, իսկ վերին մասում՝ յերկրորդ շրջանինը առաջնուները լրիվ զարգացած են լինում, իսկ յերկրորդները սաղմացին վիճակում։

Թղենին ինքնափոշոտմամբ չի զարգանում, սա անհնարին և այն պարզ պատճառով, վոր միևնույն ծաղկաբույլի մեջ արական ծաղիկները 4—6 շաբաթ ավելի ուշ են հասունանում, քան իգականները։

Թղենու ծաղիկների բեղմավորումը կատարվում և կարուիլի յէլլեր և կոչվում։



Նկ. 2. Թղենու նյուղը պտղուղներով
ա—տուաղին սերնդի պտղուղները,
փորոնի կազմակերպիչի ելին տօնանից
և—յարկորդ սերնդի պտղուղները,
փորոնի կազմակերպվում են տերեւածոցերում նույն տարին։

Փոքր կրետի (օսա) միջոցով, վորին անվանում են «բլաստա-
ֆագ» գուստում (թուրքերէն «Ելլեր» և կոչվում)։

Կրեան իր ձվերը գնում ե կապոիֆիկների—ամառալին պտղուղների չզարդացած իգական ծաղիկների մեջ, վորտեղ և նրանք անց են կացնում իրենց զարդացման ամբողջ ժամանակաշրջանը։ Այս միջատներն իրենք բեղմավորվելուց հետո դուրս են զալիս իգական ծաղկից, վորտեղ նրանք տեղափորված եյին, և ընկնում են ծաղկաբույլի մեջ. այստեղից ել դուրս գալուց նրանք դիպչելով արական ծաղիկներին, վորոնք դտնվում են սրա անցքի մոտ, վերևի մասում, վոշին հավաքում են իրենց վրա։

Այս ժամանակամիջոցում սկսվում ե իգական ծառերի յերկրորդ գեներացիան (ծնունդը): Կրետը, իր վրա ունենալով փոշին, մանում ե իգական ծառերի ծաղկաբույլերի մեջ, վորտեղ և մեխանիկորեն փոշոտում ե կատարվում։ Փոշոտման այս լերեռույթը կոչվում է կապոիֆիկացիա։

Փոշոտումն ապահովելու համար մեկ հեկտար իգական ծառերի համար բավական ե ունենալ 3—4 արական ծառ։ Շատ տեղերում փոշոտումը և բերքատվությունն ապահովելու համար արական ծառեր չեն տնկում, այլ ծաղկման շրջանում ձեռք են բերում սրանց ծաղկաբույլերը, վորոնց մեջ և զտնվում են բլաստոֆագա կամ եյլեք միջատները։ Սրանցից ժապավեն կազմելով՝ կախում են իգական ծառերի վրա։ Բլաստոֆագներն այս ծաղկաբույլերից դուրս գալով, իրենց վրայի փոշին տալիս են իգական ծաղիկներին։

Այս կերպ են վարվում և այն գեպքում, յերբ ձմրան ընթացքում աեղի ծառերի ծաղկաբույլերը ցրտահարվում և սրանց հետ սիասին վօչնչանում են իրենց մեջ տեղափորված միջատները։

Կան թղենիների վորոշ սորտեր, վորոնց պտղուղների լրիվ զարդացման և հասունացման համար բեղմավորումն անհամար շտություն ե, իսկ կան և այնպիսի սորտեր, վորոնց պտղուղները հասունանում են առանց բեղմավորման, այս վերջինները սերմ չեն ունենում, հետևալիս և այս տեսակների բազմացումը սերմերով չի կատարվում։

Թղենիներն ըստ բեղմավորության և պտղաբերության կարելի յէ բաժանել վեց խմբի։

1. Սովորականի թգենիներ —պտղաբերում են առանց բեղմնավորման (կապոիփիկացիայի)։ սրանց գարնանալին և ամառային պտուղներն ուտելու համար պիտանի լեն։

2. Զմյուռնիայի թգենիները (իգական ծառեր են) պտղաբերում են միայն բեղմնավորման դեպքում։

3. Սան-պիետրո—գարնան ծաղկաբույլեր են, վորոնց մեջ կան սաղմն չունեցող իգական ծաղիկներ, վորոնցից պտուղները զարգանում են առանց բեղմնավորման, իսկ ամառային ծաղկաբույլերի իգական ծաղիկները պտղակալում են բեղմնավորման միջոցով։

4. Աղբատիկայի թգենիներ—գարնան պտուղները գոյանում են բեղմնավորման հետևանքով, ամառայինը՝ առանց բեղմնավորման։

5. Թղենիներ—վորոնց արական ծաղիկներից զարգացած պտուղներն ուտելու համար պիտանի լեն։ սրանք շատ քիչ են տարածված։

6. Թղենիներ—վորոնց վրա գաղնանային ծաղկաբույլերը զարունակում են արական և չզարգացած իգական ծաղիկներ, իսկ ամառային ծաղկաբույլերը՝ իգական զարգացած և իգական չզարգացած ծաղիկներ։ Սրանք ևս քիչ են տարածված։

Թղեղը գործ են ածում թե թարմ և թե չորացած վիճակում։ Թղից պատրաստում են մուրաբա, զանազան պահածոներ, սուրճ և ողի։ գործադրվում են նաև հրուշակալին արտադրության մեջ։ Թուղը թարմ վիճակում լերկար պահել հնարավոր չե, շատ նուրբ լինելու պատճառով։ հեռավոր տեղեր տեղափոխելիս վի դիմանում։ Թղենու լավորակ չիր տվող սորտերն արդյունաբերական խոշոր նշանակություն ունեն։ Թուղն իր մեջ պարունակում են մի շարք աննդարար և ողտակար նկութեր։ Սրանցից ամենակարեվորն են շաքարը։ սա թարմ թղի 15—16, իսկ չորացրածի՝ 42—62% են կազմում։ Թարմ թղի մեջ ազոտամին նյութերը 1,48, իսկ չորացածի՝ 3,6% են կազմում։ Բացի սրանցից, կան նաև խոշոր քանակի թթուներ, յուղեր և չանքալին նյութեր։

Թղենու լավորակ տեսակները տարածված են գլխավորա-

պես Փոքր Ասիայում, մասնավորապես հայտնի լեն Զմյուռնիայի սորտերը, վորոնք աշխարհում առաջին տեղն են զրավում։ Այս սորտերը տալիս են հայտնի լավորակ չորացրած թուղը։

Զմյուռնիայում ամենից տարածված սորտերն են՝ ա) «Սաքի-լոր» (նշանակում են դեղին հյութալի) —պտուղը դեղին գույնի է, հաստ մաշկով, միջուկը կարմիր, պտուղները մեծ, զարգացած և հասունացման համար բեղմնավորություն ե պահանջում։

բ) «Նոր-թուզ» —չորացնելու համար ամենալավ սորտն ե։ պտուղները մեծ են, դեղին գույնի, միջուկը դեղին։ Զարգացած և հասունացման համար բեղմնավորությունն անհրաժեշտ է։ Այս յերկու սորտերի պտուղները ծառի վրա հասունանում ե չմշշկում են։ Վորպես չոր մրգերի արտադրության համար պիտանի պտուղներ տվող սորտեր հայտնի լեն նաև իտալական թղերը, վորոնք կրում են այն շրջանի անունը, վորտեղ աճում են։ Առանձնապես հայտնի լեն Սիցիլիա կղզու Սանֆուռատելու և Պոլինարում աճող սորտերը, վորոնց պտուղների մեծությունը հավասար ե Զմյուռնիայի պտուղների մեծությանը, իսկ շաքարի տոկոսն ավելի բարձր ե։ Այստեղ չորացրած թղից սուրճ են պատրաստում, ողի լեն քաշում, իսկ մնացածը գործադրում են տեղում։

Անդրկովկասում տարածված սորտերը գլխավորապես պիտանի լեն թարմ գործածության համար և առանձին արդյունաբերական նշանակություն չունեն։ Այստեղ կան բազմաթիվ սորտեր, վորոնք տարբերվում են միմյանցից պտղի մեծությամբ, գույնով և հասունացման տարբեր ժամկետներով։

Անդրկովկասում աճող թղենիները սովորական խմբի *) սորտերն են։ սրանց պտուղներն իրենց վորակով լետ են մնում իգական ծառերի խմբի պտուղներից և հասունացման համար բեղմնավորում չեն պահանջում։

Հայաստանում թղենին տարածված ե Մեղրու, Ալաբերդու, իջևանի, Շամշադինի և մասամբ Գորիսի ու Միկոլանի շրջաններում։ Մեղրում կան թղի՝ չորացման համար պիտանի սորտեր։ Սրանցից կարելի լր նշել «Քուրդաշ» խումբը, վորոնց

*) Տես թղենիների դասակարգումը։

պառւղները կանաչ և սև գույնի լեն լինում։ Կանաչ գույնի պառւղներ ունեցողներն ավելի վաղահաս են, քան սև գույն ունեցողները։ Պտուղները բավական մեծ և քաղցր են, գործադրվում են մասամբ թարմ, իսկ գլխավորապես չորացրած վիճակում։

Այս թզենիների ծաղկաբույլերի բեղմնավորման, զարգացման ու հասունացման պրոցեսները դեռևս ուսումնասիրված չեն։

Բացի Մեղրուց, վերը նշված շրջաններում տարածված սորտերը մանր և անորակ պտուղներ ունեն և գորածդրվում են թարմ վիճակում։ Թզենին լավ աճում ու զարգանում ե այսպիսի վայրերում, վորտեղ ամառն ու աշունը չորային և շոգ և լինում, իսկ ձմեռն ու գարունը՝ իոնավ ու մեղմ։ Ավելորդ խոնավությունը՝ հատկապես պտուղների հասունացման ժամանակ՝ իջեցնում ե գորակը, շաքարի քսնակը պակասեցնում ե, պտուղները ճաքում և ծառի վրա հոտում են։

Թզենին բավական չորադիմացկուն ե, սակայն մեծ քանակությամբ ու փորակով բերք ստանալու համար շատ չոր տեղերում անհրաժեշտ է այն ջրել։ Թզենին քամիներից չի վախենում, ընդհակառակը, հասունացման ժամանակ չոր և տաք քամիները լավ են ազդում պտուղների հաջող զարգացման վրա։

Թզենին հողային պայմանների վերաբերմամբ պահանջվում չե, մանավանդ թարմ վիճակում գործածվող սեղանի տեսակները ծանը և խոնավ հողերում պտուղներն անհամ են լինում և պիտանի չեն լինում չորացման համար։ Քարքարոտ, չջրվագլան ջերում թզենին ջրի պակաս և զգում։ Թզենու զարգացման համար ամենից լավ հողերը թեթև, կավավաղալին, ջրաթափանցիկ փտանութերով և կրով հարուստ հողերն են։

Թզենին այնքան ել ցրտադիմցկուն չե. մեր տեղական սորտերը, վորոնք համեմատաբար ցրտադիմացկուն են, 19⁰(3). վեպքում շվերն արդեն ցրտահարվում են։

Թզենու համար ամառվա ամիսների ջերմությունը 20⁰ Ց-ից ցածր չպետք է լինի, ավելի նպաստավոր պայմանները՝ 30⁰ Ց-ից

(մաքսիմումը) բարձր ջերմաստիճանն ե. Թզենին կարելի է բազմացնել սերմերով, մացառներով, անդալիսի միջոցով և կարոններով։

Բազմացման տարածված ձեր կտրոններով բազմացումն ե. Վորպես լավագույն կտրոններ հանդիսանում են լրիվ հասունացած բնափայտով միամյա կամ յերկամյա շվերը։ Բարակ ու յերկար միջնանդուցներ ունեցող կտրոնները չպետք ե անկել. այդպիսիները սննդատու նյութեր քիչ են պարունակում և դժվար են արմատակալում։ Կտրոնների յերկարությունը 30—40 սմ պետք ե լինի։

Կտրոնը պետք ե կտրել ճյուղի հանգույցի տակից այնպես, վոր հանգույցը մնա կտրոնի վրա։ Այս մասում սննդանյութերն ավելի շատ են կուտակված և արմատակալումը հեշտ ու արագ ե կատարվում։ Կտրոնները պետք ե կտրել ուշ աշնանը կամ վաղ գարնանը, յերբ ծառը լրիվ «հանգստի» շրջանումն ե. Զմրան ընթացքում նրանց պետք ե պահել խոնավ ավազի կտման մամուխ մեջ։ Կտրոններ անկելիս 25—30 սմ խոնավ փոքր փոսեր են փորում և կտրոնն այնպես են անկում, վոր հողից դուրս մեկ աչք մնա։ Կտրոնները կարելի յե տնկել կամ ուղղակի մշտական հողամասում, կամ նախ անկարանում և ապա մշտական վայրում։ Լավագույն խոնամբի պայմաններում տնկարանից տնկին կարելի յե մշտական հողամասը տեղափոխել նույն տարվա աշնանը, կամ մյուս առարվա վաղ գարնանը։ Տնկին տնկարանից հանելուց և մշտական հողամասը տեղափոխելուց պետք ե հատուկ ուշադրություն դարձնել տնկիների արմատների վրա, վորպեսզի սրանք չորանան և մեխանիկական վնասվածքներ չստանան։

Իգական ծառեր ստանալու համար պետք ե վերցնել այնպիսի շվեր, վորոնց վրայի ծաղկաբույլերն իգական ծաղիկներ՝ ունեն, իսկ արական ծառ ստանալու համար այնպիսիները՝ վորոնք արական ծաղիկներ ունեն։

Սերմերով բազմացնելու դեպքում նույն սորտը չի պահպանվում, բազմացման այս ձեր կիրառում են նոր սորտեր ստանալու նպատակով։

Թղենին թփային ձեռվ զարգացնելու համար պետք ե 4—5 մետր հեռավորության վրա տնկել, իսկ ծառի դեպքում՝ 6—7 մետր։ Թփային ձե ստանալու համար թողնվում են 3—4 ուժեղ զարդացած, առողջ շվեր և մյուսները հեռացնում են, վորպեսզի թողնված շվերը լավ զարդանան։ ալր նույն ժամանակ նըսնց 3—4 աշբից ետում են։

Հայաստանի պայմաններում ետը պետք ե կատարել վաղ գարնանը։ Ծառ ստանալու համար թողնվում ե միայն մեկ շիվ, իսկ մյուսները հեռացվում են։ Ցերկու դեպքումն ել գետնին մոտ առաջացած ավելորդ հոռաշվերը հեռացնում են։

Թղենու ծառը, ինչպես յեվ մյուս բոլոր պտղառու ծառերը ձեփափորելիս պետք ե հաշվի առնել երանց նորմալ անեցողության յեվ զարգացման հետեվյալ պահանջները։

Զեավորումն այնպես պետք ե կատարել, վոր սաղարթի հիմնական ճյուղերը դեպի բոլոր կողմերը հավասարաչափ տարածվեն և ազատ ոգտվեն արելց ու ողից։ Սրա համար պարբերաբար պետք ե հեռացվեն խիտ, դեպի ներս աճող, մեկը մրուսին շփող ու շվաք տվող ճյուղերը։ Պտղարերող ճյուղերն ետի միջոցով պետք ե այնպես դասավորել, վոր ծառի բոլոր ճյուղերը հավասարաչափ ծանրաբեռնվեն։ Ետի միջոցով ե, վոր մենք ի վիճակի յենք կանոնավորելու ծառերի բերքատվությունը վորակական և քանակական տեսակետից։

Թղենին կարճ ետ չի սիրում, պետք ե այն ետել թեթև, պահպանելով սաղարթի ձեւ։

Թղենու պտուղները գոյանում են լերիտասարդ շվերի տերեվածոցերում (աշնանից կազմակերպվող պտուղները, վորոնք հասնում են հուլիսից-օգոստոս ամիսների ընթացքում, գտնվում են լերկամյա ճյուղերի վրա, իսկ լերկրորդ պտուղները գտնվում են միամյա շվերի վրա), սրա համար ել ետը պետք ե կատարել այնպես, վոր նոր շվեր ստացվեն։

Թղենին սկսում ե պտղարերել 2-3-րդ տարում։ Նա շատ բերքատու լի։ Որինակ՝ Զմյուռնիայում լերիտասարդ ծառերը տալիս են 16—20, իսկ լրիվ պտղարերության շրջանում՝ 120—160 կիլոդրամ բերք։ Հողի մշակությունը թղենու այ-

դում նույն ե, ինչ վոր մյուս պտղառու կուլտուրաների ժամանակ։ այստեղ խոր փորի փոխարեն փիխրեցում են կատարում, վորովինետեւ թղենու արմատները տարածված են հողի մակերեսից մոտ և խորը փորելու դեպքում կարող են վնասվել։ Փիխրեցումը չոր և շոր կիմայական պայմաններում պետք ե կատարել հաճախակի՝ 20—25 որը մեկ անգամ։

Չորային պայմաններում թղենիների միջարքային տարածությունները հնարավոր չեն ոգտագործել, խոնավ պայմաններում կարելի լի խոտաբուխեր ցանել։ Թղենին շատ չպետք ե ջրել, մանավանդ պտղի հասունացման շրջանում, վորովինետեւ սրանց պտուղները հեշտությամբ ճաքճքում և թթվում են։ Բերքահավաքը կատարվում է աստիճանաբար, պտուղների հասունացմանը համընթաց։ Այն պտուղները, վորոնք չորացվելու յեն, թղենվում են ծառի վրա ախքան ժամանակ, մինչև վոր շմշկվում ու թափվում են։ Գոլություն ունեն չորացման բազմազան ձևեր, վորոնք ըստ եյության լերկուս են՝ 1) չորացում արեկի տակ և 2) արհեստական ջերմության միջոցով—վառարաններում։ Առաջին դեպքում ավելի բարձրորակ չոր մրգեր են ստացվում, քան լերկրորդ դեպքում։ Զմյուռնիայում թողնում են, վոր թուզը թափվի գետին (այստեղ ծառերի տակի հողը և ցելի վիճակում են պահում և պտուղների հասունացման ժամանակ գետինը մաքրում են), վորտեղից և, ցողը չորանալուց հետո, հավաքում և փոռում են հատուկ պատրաստած և խորիներով ծածկված թմբերի վրա։ Այդ թմբերը գտնվում են բաց, արևոտ տեղերում։ Փոած շիրը մի յերկու անգամ շուռ են տալիս, մինչև վերջնականապես չորանում են։

Թուզը հավաքում են այն ժամանակ, յերբ մաշկը գորշմախաղուկն ու սնակուն գույն ե ստանում, իսկ միխը գետ հյութալի լի լինում, ավելի չորացնելու դեպքում ցածր վորակի մթերք և ստացվում։ Իտալիայում թուզը ճեղքում են մի քանի տեղից, նախ չորացնում արեկի տակ, ապա մեկ բոպերվ թաթախում են լեռացրած ջրի մեջ ու ցամաքելուց հետո հավառակ։

Հայաստանում թղենու վնասառաներից տարածված են՝

1. բզային այրվածք (simaethis nemorana Hb). սա մեծ խառներ և հասցնում թղենու տերևներին. 2. բզենու կեղեվակեր (ficus) — վնասում եւ գլխավորապես յերիտասարդ ճյուղերին. նա սրանց կեղեկի վրա ողակածե անցքեր եւ փորում՝ հասցնելով այն մինչև բնափայտը, վորով և զրկում եւ ծառին հլութերի շրջանառությունից: Առաջինի դեմ՝ պետք եւ սրակել փարիզյան կանաչ պարունակող բորդոյան հեղուկ, իսկ յերկրորդի դեմ պայքարելու հիմնական միջոցը ճյուղերի հեռացումն ու ալրումն եւ:

Թղենու տարածված հիվանդություններն են. 1) Colletotrichum Caricae, փորը տարածված եւ Անդրկովկասում, Աև ծովի ափերին: Սրանից պտուղները փտում և թափվում են: Այս հիվանդությունն սկսվում եւ պտղի հասունացման սկզբնական շրջանում: Պտղի մաշկի վրա նեխման կետեր են լերեռմ, վորոնք և արագ մեծանում են: Այս նեխման կետերի կենտրոնը փու և ընկնում և ծածկվում եւ բազմաթիվ վարդագույն մնկերով: Վարակված պտուղները լիսկում, արագ փտում և թափվում են: Այս հիվանդությամբ հտճախ վարակվում են նաև տերևները, վորոնք գորշ գույն են ստանում, յեզրերից չմշկվում և թափվում են: Այս հիվանդության դեմ պետք եւ պայքարել $1,5-2\%$ բորդուան հեղուկով: Վարակված պտուղները պետք եւ թե ծառի վրայից և թե նրա տակից հավաքել ու գոչնչացնել:

2) Արմատային փտախտ (Armillaria mellea). — Այս հիվանդության վարակումն սկսվում է արմատի մի մասնիկից, տարածվելով հասնում եւ մինչև արմատավզիկը, վորտեղից վարակում եւ բռնն ու վողջ արմատային սիստեմը, գոչնչացնելով բռլսին: Այս հիվանդության դեմ պայքարի հիմնական միջոց չկա. պետք եւ վարակված բուլսերն արմատախիլ անել և այրել, իսկ վարակված հողն անհրաժեշտ է առուներով մեկուսացնել և առոնձին գործիքներով մշակել:

Այս հիվանդությունը խոնավ և կավալին հողերում ավելի արագ եւ տարածվում, քան թեթի ավազոտ հողերում: Մեղքու շրջանում այս հիվանդությունը տարածված է թթենու վրա:

Նշված հիվանդությունները Հայաստանում թղենու վրա դեռևս չեն հայտաբերված:

Նոնենին մերձարևադարձային և բարեխառն գոտու հարավային մասերի բույս եւ Տարածված եւ արևադարձային, մերձարևադարձային և բարեխառն գոտու այն մասերում, վորտեղ ձմռանը խիստ ցրտեր չեն լինում: Նոնենու հալքենիքը Պարսկաստանն եւ սրան մոտակա յերկրները, այս թվում Անդրկովկասը և մասամբ Միջին Ասիան: Նոնենին աճում եւ 41° հարավային լանո թյունից մինչև 41° հուսիսալին լարնության սահմաններում: Տարածված եւ հարավային Յեվրոպա, Արարիայում, Փոքր-Ասիայում, յում, հլուսիսալին Աֆրիկայում, Արարիայում, Փոքր-Ասիայում, Աղվանստանում, Ասիաի հարավային մասերում: Անդրկովկասաւմ տարածված եւ գլխավորապես Ադրբեջանում, վորտեղ վայրի վիճակում գործություն ունեն նոնենու վողջ անտառներ:

Հայաստանում նոնենին տարածված է Մեղրու, Գորիսի, Իջևանի, Ալահվերդու, Շամշադինի շրջաններում: Նոնենին իջևանի, Ալահվերդու, Շամշադինի շրջաններում: Նոնենին թուփի եւ նա լինում եւ միաբուն՝ $5-6$ մետր բարձրություն թուփի եւ նա լինում եւ միաբուն՝ $5-6$ մետր բարձրություն թուփի մեռու ծառի ծեռվ: Նոնենին ծառի ծեռվ աճում է արևաւնեցող ծառի ծեռվ: Նոնենին ծառի ծեռվ աճում է արևաւնեցող ծառի ծեռվ: Իրքե կուշարձային և մերձարևադարձային յերկրներում: Իրքե կուշարձային և մերձարևադարձային յերկրներում: Իրքե կուշարձային և մերձարևադարձային յերկրներում:

ըի սրանից առաջ Նուռը դեռ շատ վաղուց մարդու մննչի գործում հացահատիկային և մեղրատու բույսերին զուգահեռ խոշոր դեր ե խաղացել:

Նոնենին մշտադալար չե, ուշ աշնանը տերևաթափ ե պահած:

Նախենին—*Punica granatum* պատկանում է *Punicaceae* ընտանիքին. Նա միատուն, յերկսեռ ծաղիկներով բույս է (միւնչեւ ծաղիկը կրում է և իգական և արական մասեր): Տերեները մեծ են, նեղ յերկարավուն, հակառակ ձվաձեվ և փայլուն ու հարթ մակերեսով: Կան փոփոխակներ, վորոնք չփայլով տերեներ ունեն: Ճյուղերը փշոտ են, հատկապես յերիտասարդ շվերը: *Փշերը* 0,5-ից 1,8 սանտ. յերկարություն ունեն: Միամյա շվերը կանաչ-դեղնավուն գույն ունեն, իսկ ավելի հին ճյուղերը կանաչ-մոխրագույն, կամ շագանակամոխրագույն են: Ծաղիկները նստած են մեկական, կամ խմբերով՝ վերին ճյուղերի վրա: Խմբի մեջ համախմբված են լինում 2—5 ծաղիկ: Ծաղիկն ունի 5—7 հատ վառ-կարմիր պսակաթերթիկ, անորոշ քանակի առեջքներ և մեկ վարսանդ՝ հաստ գլխիկով: Վարսանդի յերկարությունը տարբեր չափի յերին է, յերբեմն առեջքների յերկարությունից քիչ բարձր, հավասար, կամ անգամ ցածր և լինում:

Զգարդացած, կարճ վարսանդով ծաղիկները չեն պտղաբերում և ժամանակից յուտ թափվում են:

Նոնենու պտուղը գնդածե ե և հաստ, կոպիտ, փալուն
կճեպով։ Կճեպի գույնը լինում է դեղին, կարմիր կամ կանա-
շովուն։ Պտղի գագաթը պատած է հաստ, լերկար բաժակա-
թերթիկներով։ Պտուղը ներսից բաժանված է մի քանի տնակ-
ների, վորոնք դասավորված են իրար վրա յերկու շերտով։
Ամեն մի տնակում խիտ նստած են բազմաթիվ սերմեր, վորոնք
շրջապատված են հլութալի մսով։

Տնակները մեկը մլուսից բաժանված են նուրբ թաղանթափ: Նուռն ունի շատ համեղ, դուրեկան, զովացուցիչ և մննդատա մսահրութ: Գործադրվում է զիխավորապես թարմ վիճակում: Նուռն մսահրութի մեջ կա $8-16\%$, շաքար $0,5-3\%$, թթուներ

(Ալիսավորապես կիտրոնաթթու) և $0,3^{\circ}/_0$ հանքային աղեր
գառողը պարունակում և $28-42^{\circ}/_0$ հատիկներ (սերմեր)
և $36-61^{\circ}/_0$ հյութ:

Նուան հյութից պատրաստում են զանազան զովացուցիչ խմբներ՝ նուան հյութ, գրենադին, գինի, ճնառ-շարաբ և այլն։ Գրենադինը պատրաստում են նուան հյութի, նույն քանակով շաքարի և քիչ քանակով կիտրոնաթթվի հետ միասին յեփելուց։ Գրենադինն ողտագործում են լիմոնադ պատրաստելու համար։ Նուան հյութը և զինին ունեն զովացուցիչ հատկություններ և գործ են ածվում շող շրջաններում ու անապատներում։ Նուան հյութն ունի նաև մարսեցնող հատկություն։ Անդրկովկաստամ հառա-շարաբ»-ը (խտացրած, ապա սառեցրած հյութ ե) գործ և ածվում ձկան և լուղալի ճաշերի հետ։ Ցածրորակ նուան սերմերից պատրաստում են նաև քացախ։ Նուան հատիկները գործ են ածվում զանազան ճաշեր պատրաստելու համար։ Նուան կեղեվի, ինչպես և բույսի կեղեվի, ճյուղերի և արմատների մեջ քանակով բարձրորակ դաբաղանյութ (տաճնիղներ) կտ նուան զանազան մասերն իրենց մեջ պարունակում են հետեւյա քանակի դաբաղանյութ։

Քառակիր դաբակ - յ	Արմատի կեղեց	28,5	տոկ.
Գտղի կեղեց 25-28 տոկ.	Ճյուղերը	15,25	տոկ.
Բնի 20-32 տոկ.	Առաջարկություն	7	տոկ.

Դաբաղանյութի մեծ քանակությամբ նոնենին դեռ շատ
հնաց հայտնի լեռ և ոգտագործվում է այդ նպատակով։

Մեզ մոտ իրք այդպիսին նա լրիվ չափով չի ողտագործված։
նուան կեղեկի մեծ տոկոսը կորչում, վոչչանում եւ Մինչդեռ
1929—30 թ. 9.000.000 ռ. զարագանցութ եներմուծվել Խորհըր-
դային Միություն, վորի մեջ նուան կեղեք խոշոր աեղ և
զբավել։

Նուան կեղեց գործ ե ածվում նաև վորպես սորդասոյք։
Սովորական ջրի մեջ յեփելուց ստացվում է մոխրագույն ներկ։
Ջրին զորեւ հիմք ավելացնելիս՝ մուգ-շագանակագույն, յերկա-
թի արջասպ ավելացնելիս՝ մուգ-սև գույն։
Կեղեի եկատրակտը յերկաթարջասապի հետ տալիս ե ահ-
թանաբ։

Ծաղկի պսակաթերթիկները տալիս են կարմիր ներկ։ Նուան կեղեր գործ ե ածվում իբրև գեղ՝ մի քանի հիվանդությունների դեմ, ինչպես, որինակ՝ ստամոքսի տափակ վորդի, նաև ստամոքսի ցավերի դեմ։ Նոնենին ունի շատ ամուր և գեղեցիկ փայտանյութ։ սա ունի վառ դեղին գույն և գործադրվում ե զանազան իրեր պատրաստելու համար։

Նոնենու մի քանի չպտղաբերող տեսակները մշակվում են կանաչազարդման և զեկորատիվ նպատակներով։ Սրանք ունեն գեղեցիկ ծաղիկներ և ծաղկման յերկար շրջան՝ մայիս ամսից մինչև սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսները։

Այս տեսակները համեմատաբար ավելի դիմացկուն են։ Շնորհիվ նրան, վոր նոնենին փշոտ ե և տալիս ե մեծ քանակութամբ մացառներ, գործ են ածում այն նաև կենդանի պատնեշների համար։ այս նպատակի համը բուկսերը խիտ են տնկվում։

Գոյություն ունեն բազմաթիվ սորտեր, վորոնց բար համի կարելի յե բաժանել յերկու հիմնական խմբի՝ թթու և քաղցր նուռա կան նաև այս յերկու խմբերի միջին տեղը բանող սորտեր, վորոնք մեկը մյուսից տարբերվում են պտղի ու թփի մեծությամբ, պտղի մաշկի գույնով։ արանք վառ կարմրից փոխվում են բաց վարդագույնի և բաց դեղնից՝ մուգ-դեղնի։

Հավագույն սորտերը տարածված են Ավգանստանում, գրանք աշքի յեն ընկնում պտուղների բացառիկ մեծությամբ և համով։

Այստեղ տարածված ե հայտնի «անտրի բեղանա» անունը կրող սորտը, վորը սերմեր չունի։

Ամերիկայում կա մոտ 140 սորտ, բայց ամենից տարածվածը «ներաշալի» (Nandepfuel) կոչված սորտն ե, վոր կազմում ե անկվածքների 75% -ը։ Այս սորտը վաղահաս ե, ունի խոշոր և հյութալի պտուղներ (12 մմ տրամագծով)։ մասհյութը վառ կարմիր գույն և նուրբ համ ու հոտ ունի։ Տեղափոխության համար պտուղները դիմացկուն են։ Անդրկովկասում ես շատ սորտեր կան։ Սրանցից լավագույնն ե Աղբեջանում տարածված «բալամլուրալ» կոչված սորտը։ Սրա պտուղն ունի 9—11 մմ տրամագիծ և 500—700 գր կշիռ, միուր մուգ կարմիր գույնի յե, հյութալի, նուրբ, դուրեկան, թթվաղ համով։ Կեղեր կարմիր ե։

Այս սորտի բացասական կողմն այն է, վոր կեղերը բարակ լինելու պատճառով շուրջ փշանում ե և տեղափոխելիս չի մանում։

Իմերեթիայում, վորտեղ նոնենին բավական տարածված է, լավագույն սորտեր են համարվում կվիրիլիալի շրջանի (առանձին անուն չունեն) կիսաթթվաղ համով և կարմիր մսալի հյութով նոնենիները։

Հայաստանում տարածված սորտերից աչքի յե ընկնում «Գյուլուջա» սորտը, վորը տարածված ե Մեղրու շրջանում։ Այս պտուղն ունի միջին մեծություն, 7—9 մմ տրամագծով և 150—300 գրամ կշառով։ Կեղեր դեղին գույնի յե, ծածկված թուլ բծավոր կարմիր թշով։ Կեղեր և թաղանթը միջին հաստության են, հյութը վոչ այնքան թթվաշ, դուրեկան քաղցր համ ունի։ Պառզը պահելու համար դիմացկուն ե։

Մյուս սորտերն առանձին անուն չունեն և հայտնի յեն իրեն թթու և քաղցր նոներ։ սրանք միմլանցից տարբերվում են։ ունեն քաղցրից մինչ թթու համ, 215—500 գր կշիռ և 7—10 մմ տրամագիծ ունեցող պտուղներ։ Պտղի կեղեր գույնը դեղին ե, կարմիր թշով։ պտղի $\frac{1}{4}$ -ից մինչ ամբողջը կամ ամբողջ մուկերեսը պատած ե կարմիր գույնով։

Քաղցր նոների միսն ավելի մուգ կարմիր գույնի յե լինում, իսկ թթու նոներինը՝ բաց-կարմիր, վարդագույն։

Նոնենին հաջող զարգանում ու պտղաբերում ե այն վայրերում, վորտեղ մեղմ ձնեռ ե լինում և ջիրմաստիճանը 12-ից ցածր չի հնում. — 20° (8) դեպքում վերերկրյա մասերը ցրտահարվում են, Որինակ՝ Յերեանում նոնենին ձմռանը թաղում են։

Քարնան ցրտարահություններից չի վնասվում, քանի վոր ծաղկում ե մայիս-հունիս ամիսներին։

Անդրկովկասում նոնենին լավ աճում ու զարգանում ե մինչ 860 մետր բարձրության գոտում։ սառը քամիներից պաշտպան ված վայրերում նա բարձրանում ե մինչ 1200 մետր։

Նոնենին լեռաշտաղիմացկուն բույս ե։ Նոնենիներ գտնվել են նույնիսկ Արտիայի, Արդոնալի և Կալիֆորնիայի անապատներում, բայց չորավին պայմանները բացասական ազդեցություն

ւն գործում բերքատվության քանակի, պտղի վորակի ու մեծության վրա, հետևապես չորային պայմաններում անհրաժեշտ ե արհեստական վոռոգումը։ Նույնին ամեն տեսակ հողերում աճում են Ավելի լավ ե աճում թափանցիկ հողերում։ Ավազու և հիմքային հողերում վատ ե աճում։ Վայրի տեսակներն աճում են ծանր կավալին, ավազու, շոռուա (СОЛОНЧАКИ) հողերում և չոր, քարքարու լանջերում։

Նոնենին հեշտությամբ բազմանում ե սերմերով, կտրոններով, անդալիսի միջոցով, արմատային մացառներով։ Սերմերով բազմացրած բույսերն ավելի յերկարակլաց են լինում։ Ցանկացած սորտն ստանալու համար պետք ե բազմացնել աշխատավաստով։ Կամ կտրոնապատվաստով։

Անդրկովկասում ավելի շատ տարածված ե արմատային մացառներով բազմացումը։ Այս ձեռի բազմացման դեպքում պաղաքերությունը շուտ ե սկսվում, սակայն բույսերը մեծ քանակով մացառներ են առաջացնում, վորի հետևանքով պտղաքերությունը թույլ ե լինում։ Բազմացման ամենանպատակահարծար ձեռ կտրոններով բազմացումն ե։ Կտրոնները կարող են լինել յերկու տեսակի՝ ձմռան կտրոններ՝ հասունացած բնափայտով և կանաչ՝ ամառային շվեր։ Ավելի լավ ե կտրոնները վերցնել փետրվար-մարտ ամիսներին՝ 20—35 սանտ. յերկարությամբ և 0,5—1 սանտ. տրամագծով։ Կտրոնները մինչև անկելլ պետք ե պահել քիչ խոնագ ավազի մեջ, կամ թե թաղել հողում։ Կտրոնների արագ արմատակալմանը նպաստելու համար անհրաժեշտ ե դիմել հետևյալ միջոցին։ Վաղ դարնանը բաց գաշտում փորում են 40—50 սմ խորության առու, վորի մեջ ներքեի մասը դեպի վեր տեղափորում են նոնենու կտրոնները խրձերով և ծածկում 8—10 մմ խոնագ հողի, կամ ավազի շերտով։ Այս պայմաններում կտրոնների այն մոսը, վորտեղից պետք ե առաջանան շվերը և տերեները, գտնվում են առվի հատակի սառը պայմաններում, վորի հետևանքով սրանց գարգարացումը վարդար կայանան է մացառների գարգարացման, հողի խնամքի՝ փիրեցման, պարարտացման և վոռոգման մեջ։ Յերիտասարդ ծառերի ուժեղ ետն իջեցնում է բերքի քանակը։

Հ արևի ազդեցության տակ, արագանում ե արմատների առաջացումը։ Այս վիճակում պահված կտրոնները հիմնական հողագուռում տնկելիս հեշտությամբ կաշում են։ Կարելի յե նոր կտրոններն անմիջապես արգում տնկել։

Նոնենու համար հատկացրած հողամասը պետք ե արևոտ և չուրդա քամիներից պաշտպանված տեղում լինի։ Հողը նախորոշ պետք ե լավ հերկել։ Այս շրջաններում, վորտեղ ամառը շոգ ե և չորային, ջոի պակասություն ե զգացվում, կտրոնները նախ անկում են, տնկարանում բույսը բույսից 20—36 սմ և շարքագրից 90—100 սմ հեռավորության վրա և ապա աեղափոխում են հիմնական հողամասը։

Տնկիները մշտական հողամասը պետք ե տեղափոխել աշնանը՝ տերեաթափից հետո, կամ վաղ գարնանը՝ նախքան վեգությացի սկիզբը։ Տեղափոխել պետք ե յերկու տարուց հետո գետացիայի սկիզբը։ Տեղափոխել պետք ե յերեք տարվա ընթացքում տարվում են սովորական սկզբի յերեք տարվա ընթացքում հողի փիրեցում, պարարտացում, վոռապգրութեանը հորինում է հողի փուլը և ալին։ Նոնենին բնական պայմաններում զարգանում ե թփի ձեռով։ Միարուն ծառի ձե տալու դեպքում միայն մեկ ջիկ ե թողնվում, իսկ մնացածը հեռացվում ե։ Նոնենու ուժեղ թուփ ստանալու համար պետք ե թողնել 3—5 ուժեղ զարգացած և համաշափ դասավորված շվեր, առաջին յերկու տարում սրանք պետք ե ծերատել և մյուս բոլոր շվերը հեռացնել (այս վերջին ձեռ ավելի նպատակահարմար ե)։ Հետագա տարիների ընթացքում բոլոր ավելորդ մացառները, ճյուղերը և չորուկները հեռացվում են։ Անդրկովկասում և մասնավորապես Հայստանում նոնենու վրա վոչ սի խնամքը չի տարվում, վորի հետևանքով հաճախ կարելի յե հանդիպել 15—28 խառնիճաղանձ ճյուղերով թփերի, վորոնք սննման տարածությունից չափից անց սննդանութեր են խլում և սրա հետևանքով ստացվում են մանր, ցածր վորակի ու քիչ քանակությամբ պտուղներ։ Պաղաթերող տնկվածքների խնամքը կայանում ե մացառների, ավելորդ ճյուղերի հեռացման, հասակավոր ծառերի յերիտասարդացման, սաղարթի հոսքացման, հողի խնամքի՝ փիրեցման, պարարտացման և վոռոգման մեջ։ Յերիտասարդ ծառերի ուժեղ ետն իջեցնում է բերքի քանակը։

Գետք ենցել, վոր ավելորդ ջուրը բացասաբար ե ազգում
պտղաբերության և պտղի վորակի վրա։ Առաս վոռոգման հե-
տանքով բուլսն սկսում ե ուժեղ աճել ու հոռանալ, վորի
հետևանքով չի պտղաբերում, կամ քիչ ե պտղաբերում, ը-
տացված պտուղները թթու և շաքարի փոքր տոկոսով են լինում։

Ամառվա ընթացքում պետք ե պարբերաբար ջրեր Շռգ
որերին, յերկար ժամանակ չջրելուց հետո, լերը միանգամից
ալզին ջրում են, պտուղներն սկսում են ճաքել ու ջուտ փշանալ։
Վերջի ջուրը նալատակահարմար ե տալ պտուղների հասունա-
ցումից առաջ։ Նոնենին պտուղ ե տալիս 4-րդ տարում, լրիվ
պտղաբերությունն սկսվում ե 7-րդ տարուց, վորից հետո,
նորմալ խնամքի պայմաններում ճառը պտղաբերում ե լուրա-
քանչուր տարի։ Լրիվ պտղաբերության ամենաբարձր բերքը
տալիս ե 15—30 տարեկան հասակում։ Հետագայում պտղա-
բերությունը պակասում ե և 50—60 տարեկան հասակում
արդեն պտուղ չի տալիս։ Լավ խնամքի դեպքում
մի ճառից կարելի յե ստանալ 200—250 հատ պտուղ։ Անդը-
կովկասում ծառից ստացվում ե միջին թվով 30—40 պտուղ,
բացառիկ դեպքերում միայն հասնում ե մինչև 120 պտղի։
Ամերիկայում վորոշ սորտեր տալիս են 150—240 պտուղ։
Պտուղն սկսում ե հասնել սեպտեմբերի կեսից։ Բերքահավաքը
պետք ե կատարել պարբերաբար, ըստ պտղի հասունացման
ժամկետների։ Նույշ լրիվ հասունանում ե պահպանման ընթաց-
քում։ Կարելի յե այն պահել մի քանի ամիս միայն, ամենա-
շատը մինչև կես տարի։ Հավաքելուց հետո պտուղները միքանի-
որ պետք ե արելի տակ չորացնել և ապա դարսել փոքր կույ-
տերով կամ կախեր։ Ամենալավ վիճակում կարելի լե պահել չոր-
փոսերի մեջ, վորոնց հատակը և պատերը պետք ե լցնել դարձու-
նով։ այս ձեի պահպանման ժամանակ պտուղները շատ չեն
չորանում։ Թե նոնենին և թե նրա պտուղը շատ քիչ են վարակ-
վում հիվանդություններից և վնասվում միջատներից։ Նոնե-
նու տերենները վնասվում են լվիճներից։ Պտուղները վարակվում
են թրթուրով և բորբոսով։ Ճաքած պտուղների հյութը ծծում
է յերկարաբիթը և վնասված պտուղները պահելու դեպքում,

վարակվում են թանաքի բորբոսով։ Նոնենու վնասատուներից
Հայաստանում տարածված են։ 1) սուրակետանման կոկիդիներ՝
վլխավորապես Մեղրու շրջանում, վորոնք վնասում են նոնենու-
րունը և ճյուղերը, 2) մանուշակագույն փանաբարզեզր՝ վնա-
սում ե բունը, ճյուղերը և պտուղները, 3) նոնենու լիմիք՝
վնասում ե յերիտասարդ շվերը և տերենները։ Սրանց դեմ
վայրաբելու միջոցն անաբազինով կամ վորեե այլ կոնտակտ
ներւթով սրսկելն ե։ Առաջին յերկու վնասատուների դեմ պայ-
քարելիս ավելի մեծ դոզաներ պետք ե գործածել, քան լվիճի
դեմ։ Հայաստանում նոնենու հիվանդություններ չեն նկատվել։

Նոնենին շատ ոգտակար բույս ե. Նրա մշակությունն
առանձին աշխատանք չի պահանջում և մեծ դժվարությունների
հետ չի կապված։ Պետք ե ալդ կուլտուրան տարածել։

Հայաստանում նոնենին կարելի յե զարգացնել Մեղրու,
իջևանի, Ալլահվերդու, Շամշադնի և մասամբ Գորիսի շրջան-
ներում։ Պետք ե տարածել տեղական սորտերից լավագույն-
ները և ալլ տեղերից բերել այն սորտերը, վորոնք մեզ մոտ
գոյություն չունեն։

6.

ՊԻՍՏԱԿԵՆԻ (Բիստակա)

Պիստակենին տարածված է Աֆրիկայի հյուսիսալին մասերում, Փոքր Ասիայի հարավային մասերում, Միջերկրական ծովի ափերում, Յեզրոպայի հարավային լեռներում, Թուրքիայում և Պարսկաստանում:

Միության մեջ աճում է Միջին Ասիայում (Ուզբեկստան, Տաջիկաստան, Կիրգիզիա և Թուրքմենստան, վարտեղ, ընդհանուր տոմար, պիստակենին վայրի դրությամբ գրավում է մոտ 254,401 հեկտար տարածություն), Ղրիմում, Անդրկովկասում և մասնավորապես Հայաստանում:

Պիստակենու շատ տեսակներ գոյություն ունեն. սրանցից հայտնի յեն.

1. Ալյանտական պիստակենի (*Pistacia atlantica*).—Տարածված է Միջերկրականի ծովափնյա յերկրներում. մշտաղալար ծառ է, ծաղկում է ամրանը, մանր, կարմրավուն և համեղ պտուղներ ետալիս, ամուր բնափայտ ունի, վորն ոգտագործում է կահ-կարասիներ պատրաստելու համար:

2. Տերպենտինյան պիստակենի (*Pistacia Terebinthus Lin.*).—Վայրի դրությամբ աճում է Յեզրոպայի հարավային

լեռներում, Մեծ թփի կամ ծառի ձևությունի ունի, ծաղկում, և ամռանը, մանր, սև պտուղներ ետալիս. տերպենտին պատում արհեստական կտրվածքներից հանդիսավոր է բժիշկության մեջ: Տերեների վրա ուռուցքներ են առաջանում, վորոնք և գործադրվում են վորպես ներկանյութեր:

3. Մաստակի պիստակենի (*Pistacia Lentiscus*).—Վայրի դրությամբ աճում է հարավային Յեզրոպայում, հատկապես Հունաստանում: Մաղկում է գարնան վերջերին, մասր սև կարմրավուն պտուղներ ետալիս: Պտուղները յեփում և մեծ ճշմար տակ սրանցից շատ համեղ յուղ են ստանում: Այս տեսակից առաջգած լուղը լայն չափերով ոգտագործվում է ուտելու համար: Բնի արհեստական կտրվածքներից խեժանման հլութ և արտադրվում, վորից տեղի ազգաբնակությունը մաստակ (արևելքում մաստակը ծամում են) է պատրաստում:

4. Կեվի կամ Վայրի պիստակենի (*Pistacia lentica Fisch*).—Աճում է Միջերկրական ծովի ափերում, Փոքր Ասիայում, Ղրիմում, Անդրկովկասում (մասնավորապես Հայաստանում՝ Ալաղերդու շրջանում). այս ծառը շատ մեծ չափերի լեռ համանում և շատ յերկար ետալիս. հայտնի յեն ալդ ծառի 1000 տարեկանները: Բարձր և գնահատվում հատկապես սրա վաշտանյութը, վորն իր ամրությամբ հայտնի լեռ: Տերեները ձմռանը թափվում են. ծառը մանր, կարմրավուն պտուղներ ետալիս, վորոնք ուտելու համար պիտանի չեն:

Վայրի պիստակենու վրա հաջող կերպով պատվաստվում են կուլտուրական պիստակենու սորտերը: Վայրի պիստակենու ոերմերը ցանում, վայրագներ են ստանում, վորոնց վրա և պատվաստում են պիտակենու կուլտուրական սորտերը:

Այս տեսակի բնափայտն իր մեջ մեծ քանակությամբ խեժ և պարունակում, վորը և ոգտագործվում է վորպես մաստակ:

5. Խոկական պիստակենի (*Pistacia vera L.*).—Աճում է Յեզրոպայի հարավային յերկրներում, Պարսկաստանում, Թուր-

քիալում և Միջն Ասիայում։ Բավական մեծ ծառ է, խիս
ճրազավորված, բունը և ճյուղերը պատճեն են մոխրագույն
կեղեռվ, տերեներն ովալ ձեփյեն, նոտած հիմնական տերենակո-
թի վրա՝ փետրի ձևով, լըրեքական կամ հնգական հատ միա-
սին։ Տերեները ձմրանը թափվում են։ Շաղիկները նոտած են
փնջերով, վորոնք բացգում են ապրիլի վերջերին, կամ մայիս
ամսում։



Նկ. 1. Խսկական նյուղը պտուղներով

շատ համել, իր մեջ $57^{\circ}/_0$ յուղ և $22^{\circ}/_0$ սպիտակուցային նյու-
թեր եւ պարունակում։

Միջուկից հոտավետ, համել յուղ են պատրաստում. ոյս
յուղը լայն չափերով գործադրվում եւ արևելյան յերկրներում
և իր վորակով մրցում եւ ընկույզի և ձիթապտղի լուղերի հետ-

Գիստակենու այս տեսակն ունի թե վայրի և թե կուլտու-
րական բազմազան ձևեր, վորոնք տարբերվում են պտուղների

մեծությամբ, ձևով և համով։ Կուլտուրական պիստակենու սոր-
տերի մեջ խոշորապես ձևերը բավականին շատ են. Նրանցից
վորոշ մասի պողի հասունացման ժամանակ կեղեց ծայրերից
բացվում եւ Պոււղները համար են ողոստուսակտեմբերը
ամիսներին. լրիվ հասունացած պտուղների արտաքին կեղեց
պորշ-կարմբավուն գույն եւ ստանում, թառամում, իսկ պտղա-
կոթերը չորանում են։

Պտուղներն ամբողջ վողիույղներով քաղում, մաքրում են
արտաքին կեղեցից և մի քանի որ արեի տակ չորացնում են։
Բարձր են գնահատվում հատկապես խսկական պիստակենու այն
ձևերը, վորոնք հասունացման ժամանակ ծայրի մասում կեղեց
թույլ բացված պտուղներ են ունենում։ Պտուղները պիտք եւ
պտղին չոր և հով պայմաններում, վորոնք ողտագործվում են
թարմ և բաված վիճակում։ Հասուն պտուղներն ողտագործվում
են հրուշակալին արտադրության մեջ, իսկ չհասունացածներից
մուրաբա լին պատրաստում։

Պտուղների ողտագործման հետ խոշոր նշանակություն
ունի նաև պիստակենու մյուս մասերի ողտագործումը. որինակ՝
արհեստական կտրվածքների վրա առաջացած խեժն ողտա-
գործվում եւ վորպես լավագույն ներկերի հումուլիթ։

Գարնանը՝ լիիճի ծծելու հետևանքով՝ ծառերի տերեների
վրա առաջացած ուսուցըները — զալլերը (Միջն Ասիայում
սրանց ըրուզգրինչ են անվանում), վորոնք իրենց մեջ մեծ
սրանց ըրուզգրինչ են անվանուակում, ողտագործ-
քանակությամբ դաբաղանյութ են պարունակում, ողտագործ-
քում են կաշվի արդյունաբերության մեջ։ Մրանցից նաև բարձ-
րության ներկեր են պատրաստում, վորոնք և գործադրվում են
թանգարժեք մանվածքներ, մորթեղեն ներկելու համար։

Խսկական պիստակենու շատ ամուր և գեղեցիկ փայտա-
նյութն ողտագործվում եւ թանգարժեք կահ-կարասիներ պատ-
րաստելու համար։

Գիստակենու ամենահիմնական հատկանիշներից մեկը
նրա յերաչափիմացկունությունն է. Պտղատու վոչ մի բույս,
որը յերաչափիմացկունությունն է, չոր պայմաններին այնչափ դիմաց-
այս թվում նաև նշենին, չոր պայմաններին այնչափ դիմաց-
այս չեն, վորչափ պիստակենին։ Պիստակենին իր այս հատ-

կությամբ Հայաստանի չոր մերձարևադային շրջանների համար առանձնահատուկ նշանակություն ե ստանում: Հավանորեն պիստակենու լեռաշտագիմացկունությունը պայմանափոր-փում և հատկապես նրա արժատային սիստեմի կազմությամբ: Պիստակենու ծառն ունի շատ փարթամ, խորը տարածվող ար-մատներ, փորոնք ոգտագործում են հողի ստորին շերտերի խոնավությունը: Այս պատճառով ել պիստակենին առանց վո-ռոգման մշակվում ե Միության ախպիսի շրջաններում, վորտեղ տարեկան տեղումների քանակը՝ 250—300 մմ լե համում:

Գիտակենին միաժամանակ և բավական ցըսողիմացելուն
և, հատկապես չոր կլիմայական պայմաններում (Միջին Ասիա-
յում), դիմանում է անգամ — 25-ից 30° (Յ) սառնամա-
նիքներին:

Ծովափնյա յերկրների (Իտալիա, Հունաստան և ալիք) մշակության փորձը ցուցվ է տալիս, վոր պիտակենին կիմայական խոնավ պարսպաններում խիստ ցրտերին թույլ է դիմանում։ Այստեղ նա դիմանում է հազիվ — 12—15° (Յ) ցրտերի։

Պիստակենու մշակութան ամենահիմնական խնդիրներից մեկը, դա այս կուտուրայի փոշոտման հնարավորությունների հարցներ է: Իսկական պիստակենին յերկտուն բռնը ե, ունի արական և իգաւկան ծառեր: Պատուզները զարդանում են միայն իգաւկան տարրերի ծաղիկներից և այն ել ան դեպքում, յերբ ալդ ծաղիկները արական ծաղիկների փոշով փոշոտվում ե բեղմավորմամբ են:

Իզական ծառերի ծաղիկները բաղկացած են վարսանդից և հավաքված են փնջերով։ Արական ծաղիկները վարսանդ չունեն, պտուղ չեն տալիս և միայն ծաղկավորի յեն արտադրութ:

Իգական ծառերի փոշոտումն ապահովելու համար պետք է պիտօնակենու տնկարաններում՝ ունենալ և իգական, և արտկան ծառեր՝ 7—10 իգական ծառին մեկ արական ծառի հաշվով:

Աճեցողության և փոշոտման նորմալ պայմաններում՝ պիստակենին պաղաքերում ե 4—5 տարեկան, հասակում՝ Միջահասակ ծառը սիմին հաշվով 25—30 կգ թարմ պառզ ե տալիս:

ըստ Ղոփմի (Նիկիտսկի ալգորի) տվյալների, յուրաքանչյուր ծառից միջին հաշվով $80-90$ կգ թարմ պտուղ եւ ստացվում է կան ծառեր, վորոնցից $120-140$ կգ թարմ բերք եւ ստացվում է կան ծառեր, որուն պահանջվում է մտնում վորպես նոր

Պիստակենին մշակության մեջ եւ ստառու զորված է
բուլս։ Զնալած նրան, վոր Ղոփում և Ապշերօնում նրա տար-
քեր սորտերը կան, սական անցյալում որանց զարգացումը
շատ սահմանափակ և դուտ սիրողական բնույթ ե կրել, վորի
պատճառով և որա սորտերի բազմացման ու մշակության ձևե-
րի ուսումնասիրության վրա առանձնապես ուշադրություն չեն-
դարձրել

Այնուամենայնիվ, ոգտագործելով պիտտակենու զմբարք բրալ գոյություն ունեցող գրականությունն ու հետազոտություն ների տվյալները՝ հնարավոր և ամենալայն չափերով սկսել առժեքավոր բույսի մշակությունը Միության համապատասխան գործերում, այս թվում և Հայաստանում:

Տարածված սորտերի շատ թե քիչ լրիվ ուսումնասիրություն գոյություն չունի Միության մեջ։ Վորպես սորտային հիմն կան ֆոնդ ոգտագործվում են Նոխմի և Ապշերոնի լավագույն ֆոնդը Ասիայում տարածված վայրի ձևերից առաջնայինը, վորոնք բերքատու յեն և խոշոր:

Իտալիայում տարածված սորտերը համեմատաբար են ուսումնասիրված, սրանցից հայտնի յեն՝ Շեսուկա նեղոլիքանուկայա, Շեսուկա Ֆիմիքին եղբա, նույիդարա, ու Շաղախի, Միննուպարա և այլն:

Պիստակենին բազմանում եւ սերմերով և պատվաստի միջոցով Բավական լայն չափերով տարածված եւ սերմերով բազմացումը: Այս դեպքում սերմերն ուղղակի ցանքում են ալգում—մշտական հողամասում: Բազմացման ալս ձեզ տարածված եւ հատկապես արևելյան լեռների (Միջին Ասիա, Պարսկաստան) կլիմայական չոր պայմաններում, վորտեղ տընկածքների վոսոգումը հաճախ անհնարին եւ լինում:

Սերմերով բազմացնելու դեպքում այդու հողամասը՝ նախորդ մշակվում է. 30—40 ամ խորությամբ վար են կատարում, վորից հետո տեղաձեռում և նշում են առանձին ծառերի տեղերը: Նշված տեղերում վոչ խոր փոսեր են փորում և յուրաքանչյուր փոսի մեջ 3—4 ամ խորությամբ 5—7 հատ ընտրովի սերմ են ցանում:

Ծառերը պետք եւ դասավորել 5—6 մետր հեռավորության վրա և քանի վոր առաջին 4—5 տարին հիմնական կուլտուրան բերք չի տալիս, հողն ուցինուալ ոգտագործելու և օրանից ամեն տարի բերք ստանալու համար միջարքալին տարածությունները պետք եւ զբաղեցնել բանջարանոցային կամ հատապտղալին բույսերով:

Ցանքը հարավոր եւ կատարել և աշնանը, և գարնանը: Այն վայրերում, վորտեղ չոր և չոռոգվող հողամասերում վաղ գարնանը ծլած սերմերը գարնան չորությունից չեն տուժում, աշնանը ցանեն ավելի նպատակահարմար եւ, սակայն այս դեպքում սերմերը պետք եւ կրծողներից պաշտպանել:

Ցեմեր աշնանն անհնար եւ ցանք կատարել ձմռան ընթացքում պետք եւ սերմերը պահել խոնավ ավազի մեջ, ցուրտ տեղում (տաք տեղում պահելու դեպքում հեշտությամբ ծլում են) և գարնանը նույն կերպ ցանել:

Ցանքը կատարելուց հետո, ցանված տեղերի հողի մակերեսը պետք եւ զոմազբով կամ ավազով ծածկել, վորպեսի տվելորդ գոլորշիացում տեղի չունենա և հողը չկեղեակալի:

Պիստակենու բազմացման մի ձև ել եւ կիրառվում. սերմերից ցանքը կատարվում եւ տնկարանում, վորտեղ հողը նախ մշակվում եւ սովորական ձևով, վորից հետո շարքերով ցանք եւ

կատարվում: Այս դեպքում շարքը շարքից 90—100 ամ և բույշակավում 30—40 ամ հեռավորության վրա պետք եւ գտնվի: Մշակությունն առաջին խոկ տարվանից այնպես եւ տարվում, վոր բույսերը լավ զարգանան եւ, վոր ամենազլիսավորն եւ, փարթամ, ճյուղավորված արմատացին սիստեմ ունենան:

Այս նպատակով եւ, վոր յերբ բույսերը հասնում են 20—25 ամ-ի, արմատները հատուկ դանակներով (մեքենայացված ձևով) կտրվում են:

Վորպես կուլտուրական կամ իսկական պիստակենու մի քանի պատվատակալ գործ են ածում վայրի պիստակենու մի քանի տեսակները:

Միջ բկրական ծովագինյա յերկրներում ողտագործում են «ֆիսացիա տերերին» տեսակը, վորի սերմերից թեպետ վոչ շատ ուժուղի, բայց փարթամ, փնջաձև արմատներով բույշ սեր են ստացվում, վորոնք շատ հաջող զիմանում են մի տեղից մի ալ տեղ փոխադրելուն, մինչդեռ իսկական պիստակենու վայրագները տեղափակելիս տուժում են:

Հայտատանում տնկարաններում բազմացնելու դեպքում, վորպես պատվատակալ, կարելի լի ողտագործել «կեվի պիստակենու» (ֆիսացիա մուտիկա) սերմերը, վորոնք մեզ մուտքում են վայրի դրությամբ:

Նորմալ խնամքի պայմաններում յերկրորդ տարում հնարակությունը վայրագները պատվատակը: Պատվաստը կատարվում եւ աչքապատվաստի կամ կտրոնապատվաստի ձևով:

Փորձնական աշխատանքների և փորձառու ալգեգործների տվյալների համաձայն՝ բազմացման ամենաարդյունավետ ձևը աչքապատվաստն եւ:

Փորձերը ցուցյա են տալիս, վոր աչքապատվաստ կատարելու ամենաարմար ժամանակը գարունն եւ (հութաշարժության ժամանակ), թեպետ և Ցեմերովայում կատարվում են տարվա տարբեր ժամանակներում:

Աչքապատվաստից մեծ արդյունք եւ ստացվում այն դեպքում, յերբ սա կատարվում եւ պիստակենու հասակավոր ծառերի ծաղկման շրջանում: Այս ժամանակաշրջանը՝ սկսած ապրիլի վերջերից, տեղում եւ մոտ 15 որ:

Վուսպվող շրջաններում, վորտեղ աշնանը վոռոգման միջոցով հարավոր ե վայրագների մեջ հյութաշարժությունն արագացնել կարելի յեւ աշնանը հաջող կերպով աշքապատվաստ կատարել: Սակայն Հայաստանի պայմաններում անհրաժեշտ ե այսուզությամբ հատուկ ուսումնասիրություններ կատարել:

Աշքապատվաստ կատարելիս վայրագի կտրվածքը վոչ թե սովորական Տ-ի, այլ սրա շրջված ձեռվ (Լ) պետք ե կատարել, վորպեսզի արտադրվող խեժը կտրվածքի ներքելի ծայրից ազատ հոսել կարողանա, առանց աչքին վնասելու:



Նկ. 2. Հատուկավոր ծառի պատվատման սխեման

Բայտական լայն շերտով և առանց բնափայտի շերտի: Կտրվածքի մի ծայրը պետք ե սուր վերջավորություն ունենա, վորպեսզի հեշտությամբ անցկացվի վայրագի Լ ձեր կտրվածքի վրա:

Պատվաստելուց հետո անմիջապես պետք ե վայրագները լրել:

Գարնանը լավ պատվաստած աշքերը պատվաստելուց 10 մմ հետո սկսում են աճել. այդ ժամանակ վայրագի ճյուղը 5—7 մմ բարձրության վրա պիտի հեռացնել, իսկ լերը պատվաս-

տացուն 2—3 սմ բարձրության ե հասնում, պետք ե վայրագի հացած մասն ես ամբողջությամբ հեռացնել:

Հաջող կատարված պատվաստները կպչում են 60°/0-ից վոչ պակաս քանակով:

Աշքապատվաստի փոխարեն ամերիկացիները կտրոնապատվաստի ձևն են կիրառում, սակայն բազմացման այս ձևն ավելի հարմար ե հասակավոր ծառեր պատվաստելու դեպքում:

Նկատի առնելով պիտակենու բազմաթիվ առավելությունները՝ լեռաշտաղիմացկունությունը, ցրտադիմացկունությունը, հարժեքավոր պտուղները և այլն, անհրաժեշտ ե նշել, վոր Հայագութեավոր պատվաստի մերձարեազային շրջաններում այս կուլտուրաստանի չոր մերձարեազարձային շրջաններում այս կուլտուրայի բազմացման ու տարածման գործը պետք ե սկսել առանց հետաձգելու:

Հայաստանի պայմաններում այս աշխատանքը պետք ե տարվի յերկու ուղղությամբ՝ պիտակենու վայրի ծառերը (Փիստացիա մուտիկան) պատվաստելու և նոր տնկվածքներ կազմակերպելու ուղղությամբ:

Ընդորինակելով զորմի և Միջին Ասիալի վորձը, Հայաստանում մասնավորապես Ալանկերդու շրջանում, պիտակենու պատվաստելու գործին խոշոր տեղ պետք ե տալ վայրի ծառերը պատվաստելու պատվաստելու տարածված ե Փիստացիա մուտիկան: Այստեղ բավականին տարածված ե Փիստացիա մուտիկան: Պատվաստելու միջոցով 3—4 տարվա ընթացքում հնարավոր և սրանց վերածել պիտակենու պատղաբերող այգիների:

Վայրի ծառերը հետեյալ կերպ են պատվաստվում, մայր ճյուղերը հիմքից կամ կեսից ետում են. այս կտրվածքներից նույն տարում մեծ քանակությամբ ճյուղեր են աճում, վորոնց վրա և հաջորդ տարվա գարնանն աշքապատվաստ են կատարում:

Հասակավոր ծառերի վրա հնարավոր ե նույն ժամանակամիջոցում, պատվաստի ընդունված ձերի սահմաններում, կամիջոցում, պատվաստի կատարել, «Կենեվի տակ» տարբեր ձերի կտրուսապատվաստ կատարել, «Կենեվի տակ» պատվաստը հնարավոր ե կատարել 5—10 տարեկան ճյուղերի վրա և անապայման գարնանը:

Կիրառվում ե նաև պատվաստի «հասՅուսի» ձեր. այս կեպքում ծառի ճյուղի վրա սեղած կտրվածք ե արվում, նույն

ձեռվ կտրվում ե նաև կտրոնն ու հազցվում ճյուղի կտըր՝
քածքին: Կտրոնը 7—8 սմ յերկարություն և ծայրում աչք ե
ունենում: Այս ձեփ պատվաստը ևս կատարվում ե վաղ գարնանը:

Պիստակենունոր տնկվածքները վոչ պակաս նշանակություն
և աեղ պետք ե ունենան նաև Միկոլանի, Դափանի, Գորիսի,
Իջեվանի և մասամբ Աշտարակի շրջաններում, հատկապես այս
շրջանների հողային համապատասխան պայմաններ ունեցող
անջրդի լանջերում:

Սակայն այս նոր աշխատանքները պետք ե սկսել կազմա-
կերպված ձևով թե ազրոձեռնարկութեամբ կիրառման և թե սոր-
տերի ընտրության տեսակետից:

Հայաստանի պայմանների համար ավելի արդյունավետ
պետք ե համարել միջնա-ասիական սորտերը:

Ավելի քան խորն ուսմասիրելով ու խորացնելով պիստա-
կենու վերաբերյալ յեղած զրականությունն ու հետազոտու-
թյունների տվյալները և անշեղորեն կիրառելով վերը նշված
ազրոցուցմունքները, կարելի լինի Հայաստանի մերձարեադար-
ձալին կուլտուրաների՝ ընկուղենու, նշենու, թղենու, նոնենու
շարքը գասել պիստակենու նման մի թանգարժեք կուլտուրա
նո, փորն իր ցրտադիմացկունությամբ, յերաշտադիմացկունու-
թյամբ, զեպի հողն առաջադրող տմենասակավ պահանջկոտու-
թյամբ, թանգարժեք պտուղներով և, վոր գլխավորն ե, բռյուի
բալոր մասերի ոգտագործումով (բնափայտը, խեժը, տերեների
ուսուցքները և այլն) չոր մերձարեադարձային կուլտուրա-
ների մեջ առաջնակարգ տեղ ե գրավում:

7.

ՀԱՊՈՆԱԿԱՆ ԱՐՄԱՎԵՆԻ

Ճապոնական արմավենու մշակությունը լայն չափերով տա-
րածված ե Զինաստանում և Ճապոնիայում:

Այս կուլտուրայի, ինչպես և մի շարք այլ պտղատու տե-
սակների հալքենիքը պետք ե համարել Զինաստանը: Սա փորչ
չափով առաջացուցվում ե նրանով, վոր Ճապոնական արմավենին
վայրի դրությամբ մեծ չափերով աճում ե Զինաստանում:

Ճապոնական արմավենին մշակվում ե Զինաստանում դեռ
շատ հին ժամանակներից և դարերի պատմություն ունի:

Ճապոնական արմավենին Զինաստանից մեծ քանակու-
թյամբ բերվել և բազմացվել ե Ճապոնիայում, վորտեղ և ներ-
կայումս որու կուլտուրական սորտերի թիվը հասնում է
մինչև 800-ի, իսկ Զինաստանում՝ ևս ավելի:

Զինաստանում ճապոնական արմավենու մշակությամբ զբաղ-
վում են նրա հյուսիսային նահանգներում: Ճապոնական արմա-
վենին մեծ չափերով մշակվում ե նաև Ասիայի հարավային
յերկրներում:

Այս բույրը Յելլոպա և Ամերիկայի բերվել Ճապո-
նիայից:

Անգլիայում 1789 թվին առաջին անգամ ճապոնական արմավենին սկսել են մշակել ջերմատներում, վրտակից 19-րդ դարի սկզբներում այս կուտուրան տարվելով ժքանսիա՝ լայն չափերով տարածվել ե միայն նույն դարի վերջերում։ Թրանսիսից հապոնական արմավենին անցել ե Իոալիա և Ալֆրի։ Ճապոնական արմավենու մշակությունն ավելի լայն ծավալ ե ստացել Ամերիկայի հյուսիսային նահանգներում։ Արմավենին ալտեղ ե բերվել Ճապոնիայից։ Ամերիկայի Կալիֆորնիա և Ֆլորիդա նահանգներում ճապոնական արմավենին մեծ տարածություններ ե զբաղեցնում։

ԽՍ Մ-ում ճապոնական արմավենու մշակությունն ավելի ուշ ե սկսվել (1889 թվին)։ Անդրկովկասում արմավենու մշակությունն ակավել ե լեվոպական լերկըներից՝ խիստ սահմանափակ քանակով ստացված ծառերի մշակությամբ։

Անդրկովկասում այս բուսերը զարգացել են դարձյալ սահմանափակ քանակով։ Թիֆլիզի բուսաբանական ալգում և Սև ծովի ափերի վանքապատկան հողերում։ Ներկայուսում ճապոնական արմավենու մշակությունը լայն չափությով տարածվում ե վոչ միայն Սև ծովի ափերում, այլև Ադրբեյջանում (Լենքորան), Ղոհմի հարավային մասերում և Միջին Ասիայում, վորանեղ ավելի մեծ չափերով ծավալվելու լեռ յերկրորդ հնգամյակում։

Հայաստանի մի քանի շրջաններում ևս ճապոնական արմավենին կարող ե աճել և հաջող պտուղ տալ։ Այս բույսը Հայաստանում դեռևս դոյութուն չունի։ Սակայն որա մշակությունը միանդամայն հնարավոր ե մեղմ կիմա ունեցող մեր մի շարք շրջաններում՝ Մեղրիում, Ալլահվերդում, Իջևանում և Միկոյանի ու Գորիսի ցածրադիր, քառուց պաշտպանված վայրերում։ Արմավենու լաւակությունը հնարավոր ե մեր բոլոր այն ո ջանեցում, Պատեղ թագավորությունը լի տուժում է մասնակի առաջարկությունը։

Ճապոնական արմավենին՝ վորպես մերձարևադարձային բաւյս՝ հաջող կերպով մշակվում ե մեղմ կիմայական պայմաններ ունեցող շրջաններում։ Արմավենին սրա հետ միաժամանակ բավական ցրտագիմացվուն ե. դիմանում ե—11-ից 15^o (3)

առողջամանիքներին, անգամ մի քանի փոփոխակներ — 18^o (3)

առողջամանիքներից չեն տուժում։

Ճապոնական արմավենին պատկանում ե «Երենյան» ընտանիքի գիտապիրուս ցեղին, վորին պատկանող վայրի տեսակներից հայտնի լի չորս հիմնական խումբ, վորոնք տնտեսական վորոշ նշանակություն ունեն, Այս խմբերը հետեւյալներն են։

1. ԿՈՎԿԱՍՅԱՆ ՄԱՆՐԱՊՏՈՒՂ ԱՐՄԱՎԵՆԻ

(«Դիասպիրոս լառու լ.»)

Արան անվանում են նաև սև արմավենի։ Վայրի գրությամբ շատ տարածված ե Ադրբեյջանում՝ Լենքորանում, Թալիշում, նույնպես և Վրաստանում, Աջարստանում, Արխագիայում։ ավելի քիչ չափերով՝ Ղոհմում և Տաջիկստանում։

Այս արմավենու պտուղները մանր են, գնդաձև, հաճախ լերկարավուն, սկզբում՝ կանչավուն գույնի, իսկ լրիվ հասունավայրին՝ դեղնագույն, վորը հետագայում փոխվում ե սև-կապտավունավայրի։ Պուղուերը հասունանում են նոյեմբեր ամսում, վործեն ածվում գլխավորապես չորացրած վիճակում։

Անդրկովկասում այս արմավենու պտուղներից գոշաք են պատրաստում։ պտուղներն ոգտագործվում են նաև խմորեղեն պատրաստելու համար։ Մեծ չափերով ոգտագործվում ե նաև արմավենու փալտանլությը, վորն իր վորակով բավական ամսություն տեսակ ե։

Արդյունաբերական պտղաբուծության մեջ արմավենու այս արտի սերմերը լայն չափերով ոգտագործում են վայրագներ առանալու համար։ սրանց վրա պատվաստում են ճապոնական արմավենու կուլտուրական սորտերը։

2. ԶԻՆԱԿԱՆ ԱՐՄԱՎԵՆԻ

(«Դիասպիրոս սինեզիս»)

Ժագումն ստացել ե կենարունական Զինաստանից, մշակության մեջ հայտնի չե։

3. ՃԱՊՈՆԱԿԱՆ ԱՐՄԱՎԵՆԻ

(«Դիասպիրոս կակի»)

Այս խումբը անտեսական խոշոր նշանակություն ունի։ Արան են պատկանում արմավենու կուլտուրական սորտերը։ Մարդ

բավական խոշոր ե, աերեները սուր-ձվածե, յերեսից մուդ-կա-
նաչ զույնի, փայլուն, իսկ ներքեց՝ բաց-կանաչ զույնի և
թափով պատաժ:

Տերեներն աշնանը կարմիր գույն են ստանում և թափում:
Միամյա շվերը շագանակագույն են, ծածկված բաց մոխրա-
գույն կետերով՝ վոսպնյակներով:

4. ՎԵՐԳԻՆՑԱՆ ԱՐՄԱԿԵՆԻ («Պիասպիրոս վերգինյանա»)

Սա արմավենու միակ տեսակն է, վորը ծագումն ստացել է
Ամերիկայի Վերգինյան նահանգից:

•Վերգինյան արմավենին Ամերիկայում լայն չափերով ոգ-
տագործվում ե վորպես արմավենու կուլտուրական սորտերի
պատվաստակար Հասունանալուց պտուղներն ես զործածելի են:

Ծառը բավական մեծ ե, մոտ 18 մետր բարձրությամբ՝
դեպի ցած ուղղված ճյուղերով. ունի մուգ-կանաչ սուր ելիպ-
սաձեւ տերեներ, վարոնք յերեսից փալլում են, իսկ ներքեց
պատաժ են խիտ թափով: Տերեները թափվում են:

Պտուղները տարբեր մեծություն ունեն, մեծ մասամբ բաց
նարնջագույն, մինչև լրիվ հասունացումը՝ պտուղը բավական
տափակ ե լինում. պտուղը լրիվ հասունանում ե հունվար ամսին:

Ամերիկայում այս արմավենու փայտանյութը լայն չափե-
րով ոգտագործվում է: Լրիվ հասունացած պտուղներից սպիրտ և
գարեջուր են պատրաստում. պտուղների միսը ալյուրի հետ
խունելով տարբեր տեսակի թխվածքներ են պատրաստում:

Այս խմբի մեջ աշքի ընկնող, համեղ պտուղներ ունեցող
տեսակները ամերիկացիները լայն չափերով ոգտագործում են ու-
ղեցին նպատակների համար: Սրանցից արգեն ստացվել են մի-
շաբթ բարձրորակ կուլտուրական սորտեր:

Ճապոնական արմավենին յերեք տիպի ծաղիներ ունի՝ իգա-
կան, արտկան և յերկսեռ: Ծառերը ևս յերկու տիպի յեն՝ յերկ-
տուն և միատուն:

Արտկան ծաղիկներն ունեն չորս պատկաթերթիկ և չոր-
սաժակաթերթիկ. սրանք իգական ծաղիկներից մանր են և վար-
սանդները գարգացած չեն:

Իգական ծաղիկները մեկական են նստած: Շաղկի սերմ-
նարանը բաղկացած է չորս բնից, վորոնցից լուրաքանչյուրը
թաղանթով բաժանված է յերկու մասի և ունի մեկական սեր-
մնաբողոք:

Յերկուու ծաղիկները հաղվագուռ են. զարգանում են գլ-
խավորապես արական ծաղիկների խմբում:

Արմավենին ծաղկում ե մայիսին: Ծաղիկների փոշոտումը
կատարվում է մեղուների կամ այլ միջատների միջոցով:

Ճապոնական արմավենու պտուղը նստած է բաժակի վրա:
Բաժակաթերթիկները տարբեր մեծության են՝ փոված կամ յետ
շրջված յեղբերով:

Պտուղն ամուր կպած ե պտղակոթին, վորի շնորհիվ և դի-
մակրում ե ուժեղ քամիներին:

Պտուղներն իրենց ձեռվ, մեծությամբ և համով տարբեր են.
սրանք լինում են կոնաձեւ, գնդաձեւ և տափակ ձերի:

Հաճախ արտաքինից պտղի յերկարությամբ բավական խոր
ակոսներ են լինում: Պտուղներն իրենց վերջավորությամբ ևս
տարբեր են՝ բութ, սուր ծալրով, տափակ: Պտուղները հասու-
նանում են հոկտեմբերին: Լրիվ հասունացումը տեղի ե ունե-
նում աշնան վերջին: Արմավենու պտուղները բավական դիմաց-
կուն են: Լրիվ հասունացումը տեղի ե ունենում նաև պտուղը
քաղելուց հետո (մասաներում) մինչ փետրվար-մարտ ամիսները:
Սրանք յերկար ժամանակ կարող են մնալ ծառերի վրա, առանց
թափվելու:

Պտղի գույնը կարմրավուն կամ նարնջագույն ե լինում և
միշտ ծածկված մոխրագույն խիտ փառով:

Մսի գույնը տարբեր է՝ բաց-դեղնից-մուգ գեղին, կարմիր,
նուրինիսկ գորշ գույնի: Պտուղը հասունացած վիճակում հյու-
թալի յե, քաղցր, մինչդեռ տհաս վիճակում բավական տափակ ե,
անդուրեկան, զարի պատճառով ել շատերին գուր չի գալիւ:
Հետևապես պտուղները պետք ե գործ ածել լրիվ հասունացած
վիճակում, յերբ տապությունն արդեն անցել եւ Պտուղներն
իրենց մեջ միծ քանակությամբ շաքար են պարունակում՝
14 - 17% (ավելի քան գեղձի և սալորի մեջ ե): Պտղի մեջ

կան նաև յերկաթ և վիտամիններ (մանավանդ վիտամին C-ն): Վիտամինների պարունակությամբ արմավենին հավասար է մանդարինին: Թրանսիրայում և ձագոնիայում արմավենու պտուղներն ողտագործվում են բժշկական նպատակներով:

Ձագոնական արմավենու արդյունաբերական նշանակություն ունեցող բոլոր սորտերն՝ ըստ ամերիկացի մասնագետ Յումի հետազոտությունների՝ բաժանվում են յերեք հիմնական խմբի: այս բաժանումը կատարելուց նա հիմք է ընդունել սորտերի ժաղիկների կազմությունը:



Նկ. 1. ա, բ—իգական ժաղիկներ
գ, դ—առական ժաղիկներ

Խոլոր սորտեր (արական). ամեն տարի ժաղկում և արական ժաղիկներ են տալիս: Այս խմբին են պատկանում վենդի ժուռու, գայլեյի-մառն սորտերը:

Հայտաբերված սորտերի մի մասն ունեն միայն իգական, իսկ փոքր մասը՝ միայն արական ժաղիկներ. կան և այնպիսի սորտեր, վորոնք ունեն հավասար քանակի և իգական, և արական ժաղիկներ:

Այս յերեք խմբերը հետևյալն են. 1. Մըսական վարսանդավոր սորտեր (իգական): Այս սորտերի մոտ միայն իգական ժաղիկներն են զարգանում:

Ամենաընտիր սորտերը, ինչպիսիքն են՝ զոշո, տառըրու, խիակումե, խաչիս և այլն այս խմբին են պատկանում:

2. Մըսական առեցալիությամբ ամենի առաջատար տարածությունում մի շարք սւամասիրություններ ունի, վորոնք ապացուցում են արմավենու մի քանի սորտերի «կուսածնությամբ» (պարտենոկարպիկ ձևով): սակայն սրանք հազվագյուտ են և արտադրական արժեք չունեն:

3. Փոփոխական առեցալիություն արական ժաղիկներ են տալիս, բայց վոչ ամեն տարի, այլ մեկ-յերկու տարին մեկ անգամ:

Բացի ժաղիկների այս բաժանումից, ձագոնական արմավենու ծառերն ևս բաժանվում են յերկու խմբի:




1. իգական ժառեր. կուլտուրական սորտերից շատերը պատկանում են այս խմբին:

2. յերկան ժառեր. սրանց վրա զարգանում են թե արական և թե իգական ժաղիկները, գլխավորապես՝ արական ժաղիկները:

Արմավենու սորտերի մեծ մասը պտղակալում և պտղաբերում են միայն փոխարձ փոշոտման դեպքում: Քանի վոր արմավենու կուլտուրական սորտերի թե ծառերը և թե ժաղիկները միասեն են, նոր տնկարկներ կազմակերպելիս անհրաժեշտ են անպայման ապահովել սրանց համապատասխան փոշոտիչ սորտերով:

Ճագոնական արմավենին ունի այնպիսի սորտեր ևս, վորոնք պտղաբերում են նաև առանց փոշոտման՝ «կուսածնությամբ» (պարտենոկարպիկ ձևով): սակայն սրանք հազվագյուտ են և արտադրական արժեք չունեն:

Ամերիկացի պտղաբուծ Յուլին այս ուղղությամբ մի շարք սւամասիրություններ ունի, վորոնք ապացուցում են արմավենու մի քանի սորտերի «կուսածնությամբ» պտղաբերությունը: Շատ հաճախ արական ժաղիկների կանոնավոր չժաղկելու հետևանքով լրիվ բերք չի ստացվում: Անգամ տարիներ են լինում, յերբ տնկարկներում բոլորվին բերք չի լինում:



Նկ. 2. 1—պտղաբեր զարգացել և առանց բեղմնավորման, սերմեր չունի, միայն գութավար չե. 2—բեղմնավորումը մտամբ կատարվել ե: Սերմերի ուրցը գենիվոց միայն գութավարված ե. 3—նորմալ բեղմնավարում և կատարվել, միան ամբողջովին գութավարված ե:

Մշտական և բարձր բերքատվությունն ապահովելու գործում խոշոր նշանակություն ունեն փոշոտիչ սորտերը։ Սրանցից ոզայիլյա և ռիուստիչ նշանավոր սորտերն ամեն տարի բավական կանոնավոր կերպով մեծ քանակությամբ արական ծաղիկներ են տալիս։

Բեղմնավորված պտուղները լրիվ զարգացած սերմեր են ունենում, բեղմնավորված և շատ սերմեր պարունակող պտղի միսն ավելի մուգ գունավորում ե ունենում, քան քիչ սերմ ունեցող չբեղմնավորված և անդարդացած պտուղների միսը։

Արդյունաբերական տնկարկներում հիմնական և փոշոտիչ սերմերը պետք է վորոշ հարաբերությամբ դասավորված լինեն՝ այն հաշվով, վոր 7—10 իգական ծառը մեկ փոշոտիչ ունենա։

Հաճախ փոշոտիչ սորտից մի քանի ճյուղ պատվաստում են իգական ծառի վրա և ալս կերպ նույն ծառի վրա ունենալով արական և իգական ծաղիկներ, տպահովում են բեղմնավորումը։

Ճապոնական արմավենու արդյունաբերական հիմնական սորտերը.—Համարյա բոլոր այն յերկրներում, ուր ճապոնական արմավենի յե մշակվում, մասնավորապես Ճապոնիայում, Չինաստանում և Հյուսիսային Ամերիկայում, գոյություն ունեն այս կուլտուրայի բազմաթիվ և բազմապիսի սորտեր։

Միայն Ճապոնիայում 800-ից ավելի սորտ ե հաշվի առնըգած, վորից արդյունաբերական նշանակություն ունեցողների թիվը հազիվ 90-ի լի հասնում։

Անդրկովկասում՝ Աև ծովի ափերում ևս բավական սորտեր են տարածված, սակայն ըստ Վարեցիու 1928 թվի հետազոտության, սրանց մեծ մասը վատորակ են, արդյունաբերական արժեք չունեն և շատ սակավ թվով պիտանի համեղ սորտեր ունեն։

Արմավենու մշակությունն իսպառ բացակայում է Հայաստանում։ Համապատասխան կլիմայական, հողագին պայմաններ ունեցող շրջաններում նոր տնկարկներ կազմակերպելիս պետք է ընդորինակել։ Միութիւն մերձարևադարձային շրջանների խոշոր փորձն ու հենվել այս ուղղությամբ մինչ այժմ կատարված ուսումնասիրությունների տվյալների վրա։

Ներքեւում նկարագրվող սորտերն աճում են Սև ծովի շրջաններում։


Հաշվի առնված բոլոր սորտերն ըստ պտուղների ձևի բավական տարրեր են. սրանք բաժանվում են լերկու հիմնական խմբի։

1. կայուն սորտեր, վորոնց պտուղների մոխրացում փոշոտման հետևանքով չի փոխվում։

2. փոփոխվող սորտեր, վորոնց պտուղների մոխրացում փոփոխվում ե փոշոտման ազդեցությունից։

1. ԿԱՅՈՒՆ ՍՈՐՏԵՐ

1. Արմանի. —Պտուղների մեծությունը փոփոխական է. պտուղը յերկարավուն գլանաձև, դեղին, կարմրավուն, նուրբ մաշկ ունի. միսը մուգ-նարնջագույն է, հյութալից, պտուղը տարրեր քանակությամբ սերմեր ունի. Պտուղները հասունանում են նոյեմբեր ամսում և պահպանվում մինչ մարտ ամիսը. Պտղաբերում է ամեն տարի և առատ կերպով։ Այս սորտը Աև ծովի ափերում գոյություն չունի. Հայաստանում կարող ե հաջողությամբ աճել և զարգանալ։ Պետք է պտուղները մեծ չափերով զարգացնել վորպես առաջակարգ սորտ։




Նի. 3. «Արմանի» փռփռխակի պտուղները

2. Տառեր. —Պտուղները յերկարավուն, գլանաձև են, բավական խոշոր (մինչև 100 գրամ քաշով)։ Միսը բավական հյութալի յե, մուգ-նարնջագույն. սերմերը կամ շատ քիչ են լինում, կամ բոլորովին չեն զարգանում։

Պտուղները բավական ուշ են հասունանում՝ դեկտեմբեր ամսում։

Հայաստանի համեմատաբար շոգ շրջաններում այս սորտի պտուղներն ավելի կարծ ժամանակում կարող են հասունանալ. Բեղմնավորման համար փոշոտիչն անհրաժեշտ է.

3. Տամենաչի. — Լախ, կոնաձև պտուղներ ունի, բավական խոշոր (200 գրամ կշռով): Պտուղները նարնջագույշ-կարմրագույն են, մոխրագույն, խիտ փառով պատաճ: Միսը մուգ-դեղին գույնի լե, հասունանալուց հետո տապությունն անցնում է: Պտուղը շատ համեղ է և համարյա սերմեր չունի. կարելի ին ոգտագործել թե թարմ սպառման և թե չորացման նպատակներով: Բեղմնավորման համար փոշոտիչն անհրաժեշտ է:




Նկ. 4. «Ճառւրու» փոփոխակի պտուղները.

ցած վիճակում շատ համեղ, քաղելուց հետո ձեռան ընթացքում լավ պահպանվում է:

Այս սորտի պտուղը, վորպես չոր մրգերի հումույթ, առաջնակարգ տեղ է բռնում: Պտղաբերության համար փոշոտիչն անհրաժեշտ է:


5. Փուստիչ. — Այս սորտը պարբերաբար է պտղաբերում (վոչ ամեն տարի) և շատ սակավ բերք է տալիս, սակայն վորպես փոշոտիչ սորտ պետք է զարգացնել, քանի վոր ամեն տարի բավական մեծ քանակությամբ արական ծաղիկներ է տալիս:

Պտուղները համեմատաբար ցածր վորակի լեն, միջակ մեծության և դեղին-կարմրավուն գույնի: Ծաղկուական արմավենու մշակության շրջաններում այս սորտը՝ վորպես հիմնական փոշոտիչ՝ պետք է իր արժանի տեղն ունենա:



Նկ. 5. «Շաշիտա» փոփոխակի պտուղները

6. Տամոպան. — Պտուղները խիստ տափակ ձև ունեն, շատ խոշոր են (մինչև 400 գրամ քաշով), ծածկված կարմիր-նարնջագույն և բավական կոպիտ մաշկով: Միսը բավական հյութալի լե, հասունանալուց շատ գուրենական համ և ունենում: Սերմերը հազվագյուտ դեպքում են զարգանում: շատ բերքատու սորտ է, պտղաբերում է նաև առանց փութականության:



Նկ. 6. «Փուտիչ» փոփոխակի պտուղները

7. Գուը. — Այս խմբին են պատկանում մի քանի սորտեր (գոյզ նշանակում է տափակ պտուղներ ունեցող): Պտուղները (միշտ նշանակում է մեծության են (200 գրամ քաշով), նարնջագույն, կարմիջական մեծության են (մինչև 400 գրամ քաշով), նարնջագույն կոպիտ հասունանալուց հետո մսի տապությունն անցնում և գուրենական համ և ունենում: ոգտագործվում է չորացման համար:

8. Տչիումֆ. — Տափակ ձևի պտուղները ունեցող խմբին են պատկանում: Պտուղները մասը կամ միջակ մեծության են, բավական կոպիտ և մուգ-կարմրավուն գույնի մաշկ ունեն: Մեծ քանակությամբ սերմեր ունեն: Միսը բավական հյութալի լե: Պտղաբերության համար անհրաժեշտ է փոշոտիչ սորտ. լրիկ հասունանալուց հետո պտուղները քաղցր, գուրենական համ են ունենում:



2. ՓՈՓՈԽԱԿԱՆ ՍՈՐՏԵՐ

9. Խիակումեն. — Ամենաարժեքավոր սորտերից մեկն է ունի բավական խոշոր (մինչև 400 գրամ քաշով), գնդաձև պտուղներ:

Պտղաբերում է և փոշոտմամբ, և առանց փոշոտման: Բեղմնափորված պտուղներն ավելի մուգ գույնի լեն լինում և առանց տապության, անդամ տհաս վիճակում, մինչդեռ չբեղմնավորված, չփոշոտված պտուղները տտիպ են լինում և բաց դեղին գույնի: Բարձր բերքատու սորտ է, պտուղները ձմռան ընթացքում լավ պահպանվում են:

10. Մարու. — Այս անվան տակ ամփոփվում են մի շարք սորտեր, վարոնք գնդաձև պտուղները ունեն: Պտուղները միջակ մեծության են, ծածկված կարմրաշագանակագույն, փայլուն և նուրբ մաշկով. միսը բավական ամուր է, սերմեր պարունակող պտուղներն ուտելու համար պիտանի լին անգամ լրիվ չհասունացած վիճակում. պտղակալում են նաև առանց փոշոտիչ սորտերի:

11. Սարուրու. — Պտուղները միջակ մեծության են, գնդաձև, բաժակի շուրջն զգալի կողեր ունեն: Պտղաբերելու համար պետք է փոշոտիչ փոփոխակ: Պտուղները դուրեկտն համ ունեն: Հյուսիսացին Ամերիկայում առաջնակարգ սորտ է համարվում:



Նկ. 7. «Եմոն» փոփոխակի պտուղներ

Արմավենու բոլոր սորտերի սերմերը խաչաձև փոշոտման արդյունք են, հետեարար սրանցից ստացված բույրի սորտերը հատուկ հատկանիշներ չեն պահպանում և այլ հատկանիշներով բազմաթիվ ու բազմապիսի սորտեր են տալիս:

Պատվաստակալ ստանալու համար ոգտագործում են արմավենու բոլոր տեսակների՝ կովկասյան, վերգինյան և ճապոնական սերմերը:

Անդրկովկասում ամենատարածված և ամենատևեղ վարագներ տվող տեսակը կովկասյան արմավենին է, սա ունի փնջաձև արմատներ: Վերգինյան արմավենին հնարագոր և բազմացնել թե արմատալին մացառներով և թե կտրոններով:

Ամերիկացիները շատ հաճախ արմավենու կուլտուրական սորտերը պատվաստում են վերգինյան արմավենու արմատային կտրոնների վրա:

Հաշվի առնելով այն հանգամանքը, վոր արմավենու սերմերը շատ հեշտությամբ են կորցնում իրենց ծլունակությունը, անհրաժեշտ և աշխանը սըանց անմիջապես ստրատիֆիկացիալի յենթարկել (խավաշարել), ձմռան ընթացքում պահել իրոնակ ավազի մեջ, ցուրտ տեղում և վաղ գարնանը ցանել:

Յեթե սերմերն ստրատիֆիկացիալի չեն յենթարկված, պետք է շատ կարծ ժամանակով պահել իրոացրած ջրի մեջ և նոր ցանել:

Արմավենու բազմացման դեպքում կիրառվում են թե աչքապատվաստ և թե գարնան կտրոնապատվաստ:

Հատ գիտահետազոտական փորձերի տվյալների (Արխագիւյի մերձարեադարձային փորձնական կայան), անհամեմատ ավելի բարձր արդյունքներ են ստացվում այն դեպքում, յերբ արմավենու բազմացումը կատարվում է գարնանը և կտրոնապատվաստի միջոցով:

Գարնանը կտրոնապատվաստը կատարում են այն ժամանակ, յերբ պատվաստակալի վրա առաջին բողբոջները բացվում են: Պատվաստի ժամանակաշրջանը տևում է մոտ յերկու շաբաթ:

Կտրոնով պատվաստը կատարում են թե գարնանը՝ տընկարանաւմ և թե ձմռանը՝ ուղղակի վայրագների վրա, ծածկի տակ: Վերջին դեպքում պատվաստը կատարում են մարտ-ապրիլ ամիսներում: Պատվաստած վայրագներն ուղղահայաց դիրքով թաղում են ջերմոցներում կամ ջերմատներում, վորտեղ ջերմաստիճանը պետք է 20—25°(8)-ի հասնի:

Պատվաստը կաշելուց հետո, գարնանն այս բուլսերը մնում են բաց ջերմոցներում մինչև հաջորդ տարվա գարնանը, վորից հետո անդադար պատվաստը կամ մշտական հողամասը:

Տնկարանում պատվաստելու դեպքում պատվաստած վայրագների բուկը պետք է տալ այն հաշվով, վոր գետնի մակերեսի վրա մեկ բողբոջից (աչքից) ավելի չմնա:

Աչքապտվասը կատարվում է թե գարնանը և թե աշնանը, սակայն վերջին դեպքում՝ պատվաստի կտրվածքներից կոլոիդ հեղուկ (խեժ) է արտադրվում, վորը խանգարում է աչքը կազելուն և սրա հետևանքով կպած պատվաստների թիվը բիշ է լինում:

Աշնանը աչքապտվասը (Սև ծովի շրջաններում) պետք է կատարել սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին:

Աչքը պետք է պատվաստած լինի արմատավզիկին շատ մոտ:

Պատվաստելու աշխատանքը պետք է կատարել շատ արագ. աչքն անմիջապես պետք է կապել և այն ել միայն մեկ անգամ:

Աչքը պետք է կտրոնից այնպես հանել, վոր վրան փայտի շերտ չմնա, մաքուր վիճակում նա շուտ կկպչի վայրագին:

Կտրոնների ընտրությունը հսկայական նշանակություն ունի: Կտրոնները պետք է կտրել համապատասխան սորտի առողջ ծառերից: Ճյուղերի ընտրությունը պետք է կատարել պտղաբերության ժամանակ: Աշնանը աչքապտվաստի համար կտրոնները կարգում են 10—12 որ պատվաստելուց առաջ:

Գարնան պատվաստի համար կտրոնները նախապատրաստում են հունվար ամսին: Նախապատրաստված կտրոնները պետք է լինեն ցուրտ տեղում, խոնավ ավագի մեջ: Ավագը չորանալիս պետք է ժամանակ առ ժամանակ ջրեր:

Տնկարանի հետագա խնամքը տարվում է նույն կերպ, ինչ կերպ պտղատու այլ տեսակների դեպքումն եր: Պատվաստացուները տնկարանում մնում են մեկ կամ յերկու տարի, վորից հետո տեղափոխվում են մշտական հողամաս:

Ճապոնական արմավենին բաց, արեւոտ հողամասերում հաջող ե աճում: Նա խորը, թափանցիկ հողերում լավ է պըտղաբերում: Նորմալ աճեցողության և պտղաբերության համար արմավենին բավականաչափ խոնավություն և պահանջում է պտղաբերության համար արմավենին բավականաչափ խոնավություն (cercospora caei), հիվանդությունների և վնասատուների դեմ գիմացկուն լինելու ալի հանգամանքը զգալի չափով հեշտացնում է արմավենու կուլտուրայի խնամքը:

Վոռողվող հողերում արմավենին պետք է լին չափով, ինչ չափով մյուս պտղատու տեսակները:

Պտղատու ծառերը պտուղների հասունացման շրջանում պետք է քիչ ջրել. սրանով հսարավոր և նպաստել ճյուղերի փայտացմանը և պտուղների լրիվ հասունացմանը — հակառակ պարագայում աշնանն սկսվում է ճյուղերի յերկրորդ աճը, վորանց փայտանյութը տհաս մնալով՝ ձմռան և ուշ աշնան ամիսներին յրտահարվում է, իսկ պտուղների հասունացումը ձգձըգ-գում և հաճախ անորակ պտուղներ են ստացում:

Մշտական հողատասում ծառերը պետք է տնկել քառակուսային սիստեմով. այս դեպքում այգու աշխատանքների մեքենայացմանը լրիվ հնարավորություններ են տրվում: Ծառերը պետք է տնկել մեկը մյուսից 5—6 մետր հեռավորության վրա: Արմավենու այգու հողի մշակությունը կատարվում է պտղատու այլ տեսակների համար ընդունված ձևերով:

Ծառերը կարելի յե տնկել թե տնկել աշնանը և թե վաղ գարնանը. սակայն հաշվի առնելով Հայաստանի մերձարևադարձակին շրջանների վոչ խիստ ձմեռը և կարճատե զարունը՝ ավելի նպատակահարմար է հիմնականում ծառերը տնկել ուշ աշնանը, բայց անպայման հասունացած և տերեւաթափ յեղած տնկերով:

Այգին տնկելուց հետո ծառերն անմիջապես պետք է ջրել:


Արմավենու այգու հողը միշտ պետք է փուխր պահել և առնասարակ բավարարել խնամքի ու մշակության այն ազդուականիները, վորոնք սահմանված են պտղատու այգու համար:

Պարաբռացներու համար գոմաղը և գործադրվում նույն չափերով, ինչ չափերով գործադրվում է պտղատու այլ տեսակի ծառերի համար: Կանաչ պարաբռացնումը նմանապես լավ է անդրադարձանում արմավենու վրա:

Արմավենու հիվանդություններից Սև ծովի շրջաններում հայտնի յե միայն մեկ սնկային հիվանդություն (cercospora caei), հիվանդությունների և վնասատուների դեմ գիմացկուն լինելու ալի հանգամանքը զգալի չափով հեշտացնում է արմավենու կուլտուրայի խնամքը:

Արմավենու պտուղները զարգանում են միամյա (նախորդ տարվա) շփերի միջին մասի բողբոջներից:

Այս ճյուղերը, վորոնք արգեն մի տարի պտղաբերել են, յերբեք կրկին անդառ չեն պտղաբերում: Արդեն պտղաբերած միամյա կամ յերկամյա ճյուղերն անհրաժեշտ ե ամեն տարի հիմքից ամբողջովին հեռացնել:



Նկ. 8. ճապոնական արմավենու եթի սիսեման

ա—գծերը ցույց են տուիս ետելու և դր.

բ—անցյալ տարվա պտուղների կորերը

ուատ, վոր անհրաժեշտ ե հատուկ հետաքանակ պտուղների կորերը

ճյուղերը, վորպեսզի բերքի ծանրության տակ չկոտրվեն:

Սորտերի ճիշտ դառնավորման և ծառերի լավ խնամքի պայմաններում ճապոնական արմավենին բավական առատ բերք է տալիս: Հստ չամամիութենական բուսաբանական ինստիտուտի տվյալների՝ Սուխումում «Խիակումբ» սորտն ամեն տարի 150 կգ ավելի բերք է տալիս: Հստ ամերիկան տվյալների՝ «Խաչիա» սորտը յուրաքանչուր տարի 96 կգ բերք է տալիս:

Ետած մասում հետեւյալ տարին առաջանում են մի շարք ուժեղ ճյուղեր, վորոնք հաջորդ տարում բավականի հաջող պտղաբերում են: Յեթե այդ ճյուղերը չետպին, հետագայում սրանց ծայրերից կաձեն ավելի թույլ ճյուղեր, բերքը հետզհետե կկենտրոնանա սաղարթի արտաքին ծայրամասերում՝ թույլ աճող շվերի վրա և սակավ ու անորոշ պտուղներ կստացվեն:

Ճյուղերի ետք կարելի յեկատարել ուղղակի բերքահավաքի ժամանակ:

Արմավենին պտղաբերում ե տնկելուց յերկու - յերեք տարի հետո և այնքան առատ, վոր անհրաժեշտ է հատուկ հետաքանակ պտղաբերում ամբողջ տարի վեցամյակի վերաբերյալ պահանջմանը:

Պտուղները պետք ե քաղել անպայման պտղակոթունի հետ միասին: Յեթե բերքը հետափոր վայրեր փոխադրելու համար ե, պետք ե քաղել դեռ ամուր, նոր կարմրած վիճակում և առանց մաշկը վնասելու: Տեղերում սպառելու դեպքում պտուղները մաշկը վնասելու: Տեղերում սպառելու դեպքում պտուղները կարելի յե ծառի վրա թողնել մինչև լրիվ հասունացումը: Բաց գույնի միս ունեցող սորտերն անպայման պետք ե պահպեն մինչև լրիվ հասունացումը: Վորպեսզի պտղի տապաւթյունն անցնի և գործածության համար պիտանի լինի: Մուգ գույնի միս ունեցող սորտերի պտուղները կարմրելուց անմիջապես հետո կարելի յե գործածել:

Հեռավոր վայրեր փոխադրելու համար պտուղները նախ պետք ե փաթթաթել թղթի մեջ և ապա հատուկ արկղներում կիպ դասավորել:

Վերջերս Ամերիկայում արմավը պահում են հատուկ սառցարաններում 0° -ից մինչև -1° ջերմության պայմաններում, վորտեղ նրանք դիմանում են մինչև մարտ ապրիլ ամիսները:

Զինացիներն արմավները ուղղակի պահում են այգիներում պատրաստած առուներում: Վերջիններում պտուղները սառած վիճակում պահպում են բավական յերկար ժամանակ: Սպառելուց առաջ սառած պտուղները հալեցնում են սառը ջրում, վորից և արմավն իր համը բոլորովին չի կորցնում:

Բավական տարածված և արմավենու պտուղների չորացումն ամբողջական պտուղներով կամ նրա կտրոններով: Զորացած պտուղներն ունեն գեղեցիկ տեսք, դեղին գույն, արտադրում են շաքարի բյուրեղիկների բարակ շերտ և իրնց համով հիշեցնում են չորացրած թուզը:



Նկ. 9. ճյուղի զարգացումն ենթալուց հետո. ետած տեղից տնած ուժեղ հյուղերը, վորոնք հաջորդ տարին պտղաբերելու յեն

Չինաստանում և Ճապոնիալում թարմ և հատկապես չորացրած պտուղները մննդի հիմնական մթերքներից են:

Արմավենու պտուղներից պատրաստում են մուրաբաներ, ըմպելիքներ և պավիլաներ. ոգտագործում են նուև թթվեցրած փեճակում:


Հաշվի առնելով ճապոնական արմավենու մի շարք կարելոր առավելությունները՝ բարձր բերքատվությունը, ծառի և պտուղների դիմացկունությունը, ծառի գեղեցիկ արտաքինը՝ այս կուլտուրան պետք է մշակել Հայաստանի մերձարեադարձային շրջաններում, ինչպես խորտնտեսություններում ու կոլտնտեսություններում, նույնպես և կոլտնտեսականների տնամերձ հողամասերում:

Պատ. խմբ՝ Ա. Յափազյան, Ց. Նազարյան
○ Տելու, խմբ՝ Հ. Մուրադյան ○ Լեզվ.
խմբ՝ Արք. Գրիգորյան ○ Սրբագրիչ
և Այլազյան:

Գլուխ. լիտպոր Ա. 437, հրատ. Ա. 296,
պատվեր Ա. 43, տիրաժ 8000, հանձնվել
է արտադրությ. 1936 թ. հունվարի 10-ին,
ստորագրված է տպագր. 1936 թ. մարտի 8-ին, 7 տպ. թերթ. մի տպ. թերթ.
թու. Տ 35968 տպ. Դ.

Գյուղերատի տպարան, Յերեան, Նալբանդյան 11.





ԳԻՐ 2 Ր.
ЦЕНА 2 Ր.

Наркомпищепром СССР – Армконсерврест
Плодо-овощная Зональная станция

СУХИЕ СУПТРОПИЧЕСКИЕ
КУЛЬТУРЫ В АРМЕНИИ

Сельхозгиз 1936 Эривань

ՀՀ Ազգային գրադարան



NL0280686

19649